Ազգ
Azg
14 ՄԱՐՏ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 37(5120)
ISSN: 1829-1651

# Բաքվում արդեն սկսել են «խմբագրել» ԱՄՆ հետախուզությանը

Մարտի 10-ի իրադարձություններին, երբ Բաքվում ձերբակալվեց «Վերջ բանակում զինվորների մահվանը» ակցիայի ավելի քան 60 մասնակից, իսկ մնացածներին ոստիկանությունը դաժանորեն ցրեց, անդրադարձել է Ադրբեջանում ԱՄՆ դեսպանը: Խստորեն քննադատելով ոստիկանության գործողությունները, նա, դիվանագիտորեն ներկայանալով իբրեւ Ադրբեջանի բարեկամ, իշխանություններին հորդորել է հարգել հավաքների իրավունքը եւ դրա իրացման համար հարկավոր պայմաններ ստեղծել: Դրան նախորդել էր ԱՄՆ Ազգային ժողովրդավարության ինստիտուտի NDI հասցեին ադրբեջանցի որոշ քաղաքական գործիչների մեղադրանքը, թե «ֆեյսբուքյան հեղափոխություն է նախապատրաստում», ինչին ԱՄՆ դեսպանատունն արձագանքել էր կոպիտ՝ նման հրապարակումները գնահատելով մեկ բառով՝ «անհիմն»:

Այսպիսով, հերթական անգամ Միացյալ Նահանգները եւ Ադրբեջանը դժգոհություններ փոխանակեցին: Անհավանական է, որ Բաքվում ԱՄՆ դեսպանը միայն սեփական նախաձեռնությամբ է գնահատում Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակը: Մարտի սկզբին ԱՄՆ պետական դեպարտամենտը Ադրբեջանը համարել էր թմրանյութերի տարանցման «հիմնական երկրներից մեկը»: Այս համապատկերին, բնականաբար, իշխող վարչախումբը պետք է քարոզչական ամենատարբեր հնարքներ օգտագործի՝ ադրբեջանական հանրությանը ներշնչելու, որ ԱՄՆ-ի հետ հարաբերություններում «ամեն ինչ կարգին է»:

Եվ քանի որ նման պնդումների համար որեւէ իրական հիմք չկա, Բաքվի «քաղտեխնոլոգները» ստիպված են բառիս բուն իմաստով կառչել փրփուրներից: Իշխանամետ day.az-ը մի տեղեկատվություն է տարածել հետեւյալ ցցուն վերնագրով՝ «ԱՄՆ հետախուզությունն զգուշացնում է Լեռնային Ղարաբաղի համար պատերազմի վերսկսման մասին»: Բուն տեքստն սկսվում է այսպես. «Երեւանի եւ Բաքվի միջեւ Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի օկուպացիայի պատճառով դիմակայությունը մնում է տարածաշրջանում լարվածության պոտենցիալ օջախ: Ինչպես հաղորդում է Trend-ը, այդ մասին ասվում է ԱՄՆ ազգային հետախուզության պետ Ջեյմս Կլեպպերի՝ Կոնգրեսին ներկայացրած «ԱՄՆ անվտանգության սպառնալիքների մասին» զեկույցում», ինչից կայքի այցելուն կարող է տպավորություն ստանալ, թե նման գնահատականները ԱՄՆ Ազգային հետախուզության պետի զեկույցից են մեջբերված:

Մինչդեռ զեկույցում ընդամենն ասված է. «Սուր հռետորաբանությունը, վստահության երկկողմ բացակայությունը եւ զորքերի շփման երկայնքով շարունակվող բռնությունները կարող են հանկարծակի սրել իրավիճակը»: Այսքան բան: Այդ մասին խոսում են բոլորը, որ շահագրգռված են խնդրի խաղաղ կարգավորման հեռանկարով, ինչպես բազմիցս հայտարարել է նաեւ ԱՄՆ-ը՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկիր: Ինչի՞ է արժանի ադրբեջանական կողմի այս ձեռնածությունը: Ծաղրի՞, լիաթոք ծիծաղի՞, քմահաճույքի՞: Կարծում ենք, մեր կողմից՝ միայն խղճահարության: Իսկ ինչպիսի՞ն կլինի ԱՄՆ վերաբերմունքը՝ դա արդեն պաշտոնական Վաշինգտոնի խնդիրն է:

Վ. Ա.

# Վստահության ճգնաժամ

ՄԱՐԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




«Այժմ, Ձեր կարծիքով, Դուք Րաֆֆի Հովհաննիսյանին անհրաժեշտ որակյալ իրավաբանական ծառայությո՞ւն եք մատուցում, թե՞ ժամանակ եք ձգում՝ Սահմանադրական դատարանին զրկելով օբյեկտիվ լսումներ անելու հնարավորությունից»: Սա հարցրել է ՍԴ-ի անդամ **Կիմ Բալայանը** երեկ, ՍԴ-ում ընթացող քննության ընթացքում, Րաֆֆի Հովհաննիսյանի ներկայացուցիչ Զարուհի Փոստանջյանին:

«Հարգելի դատարան, կարծում եմ՝ Րաֆֆի Հովհաննիսյանն ինքը Ձեզ կասի, թե ինչ օգնություն եմ ցուցաբերում: Ես նրան այն օգնությունն եմ ցուցաբերում, որն անհրաժեշտ է հայ ժողովրդին», պատասխանել է նրան Զարուհի Փոստանջյանը: Ասենք, որ այս հարց ու պատասխանի համարժեքությունը կամ անհամարժեքությունը, ինչպես կուզեք, մեկին-մեկ համընկնում է երեք օր ընթացած դատաքննությանը, որտեղ կողմերը և՛ միմյանց հեգնական նախադասություններ էին ուղղում, եւ կասկածի տակ դնում միմյանց իրավական գիտելիքները, և՛ դուրս գալիս դատաքննական կանոններից, և՛ երբեմն իրենց ուրախ պատասխաններով կամ անեկդոտներով շարժում դահլիճի ծիծաղը:

Այսօր Սահմանադրական դատարանը, հայցվոր եւ պատասխանող կողմերի եզրափակիչ ելույթները լսելուց հետո, վերջապես կհրապարակի իր որոշումը՝ փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների արդյունքները վիճարկող հայցերի վերաբերյալ: Ասենք, որ համարյա ողջ դատաքննության ընթացքին հետեւելով՝ մենք առանձնապես չլուսաբանեցինք այն, եւ ասենք, թե ինչու:

Բանը բոլորովին էլ այն չէ, թե ով է ճիշտ, ով սխալ Սահմանադրական դատարանում տեղի ունեցող դատաքննության հայցվոր եւ պատասխանող կողմերից, ով է իրավականորեն ավելի պատրաստված ու գրագետ, ով՝ ոչ:

*Տես էջ 2*

# Մարսի վրա եղել են կյանքի համար նպաստավոր պայմաններ



**Curiosity մարսագնացի վերցրած բնահողի նմուշների քիմիական տարրալուծումը ցույց է տալիս, որ Մարսի վրա անցյալում եղել են կյանքի համար նպաստավոր պայմաններ: Նման հայտարարությամբ հանդես է եկել ԱՄՆ օդատիեզերական հետազոտությունների գործակալությունը՝ NASA-ն:**

**Մասնավորապես հայտնաբերվել են հին Մարսի վրա ջրի գոյության ապացույցներ: Գեյլի խառնարանից վերցված բնահողի նմուշներում գիտնականները գտել են կենդանի օրգանիզմների գոյության համար անհրաժեշտ կարեւոր քիմիական նյութեր՝ ծծումբ, ազոտ, ջրածին, ֆոսֆոր եւ ածխածին: Միեւնույն ժամանակ մասնագետները ընդգծել են, որ առայժմ հիմքեր չկան ասելու, թե անցյալում Մարսի վրա մանրէներ են եղել, բայց դրանք հաստատ կարող էին այնտեղ ապրել:**

**«Մարսագնացի վայրէջքի տարածքը՝ Գեյլի խառնարանը, Արեգակնային համակարգում Երկրից դուրս դարձավ կյանքի համար պիտանի ճանաչված առաջին վայրը», նշվում է NASA-ի պաշտոնական կայքէջում:**

**BBC-ն վկայակոչում է NASA-ի ներկայացուցիչ Ջոն Գրանսֆելդին, որն իրականացված գործողությունը գիտնականների խոշորագույն նվաճումն է համարում Curiosity-ի վայրէջքից (06.08-2012) հետո:**

# Սպիտակ ծուխն ազդարարեց նոր Պապի ընտրվելը Ֆրանչեսկո 1-ին



Տասնյակ հազարավոր կաթոլիկներ երեկ գիշեր, հորդառատ անձրեւի տակ, ոմանք արցունքն աչքերին, ջերմեռանդ խանդավառության մեջ, ավելի քան մեկ ժամ սպասում էին նոր Պապի անվան հայտարարվելուն: Ժամը 22-ի մոտ (Երեւանի ժամանակով), Սիքստինյան մատուռում փակված 115 կարդինալները հաջորդ 5-րդ քվեարկության արդյունքում ընտրել էին նրան: Ծխնելույզից բարձրացած սպիտակ ծուխն ազդարարել էր այդ մասին, եւ մարդիկ, տարբեր երկրների դրոշներ ծածանելով, որոնց մեջ, ի դեպ, շատ էին Բրազիլիայի դրոշները, անհամբեր էին նրա անունն իմանալու: Եվ կարծեք հրահրելու համար նրանց անհամբերությունը, հանդիսանքային մասը երկար էր ձգվում՝ նախ տողանցեց ավանդաբար շվեյցարացիներից բաղկացած պապական պահակագունդը, ապա՝ իտալական փողերախումբը, որը Վատիկան պետության հիմնը հնչեցրեց: Եվ ի վերջո, ժամը 23:15-ին, Սուրբ Պետրոսի հրապարակի վրա բացվող պապական պատշգամբի հետեւի դուռը բացվեց, որտեղից երեւաց կարդինալներից երիցագույնը՝ Ժան Լուի Թյուրոնը, որ հայտարարեց նորընտիր Պապի անունը՝ Ֆրանսիս 1-ին կամ Ֆրանչեսկո Պրիմո:

Նորընտիր Պապը Արգենտինայից է, կարդինալ Ժան Բերգոլիո, 76 տարեկան, ջեզվիտ միաբանության անդամ (դեռեւս առաջին ջեզվիտ եկեղեցականը պապական աթոռին բարձրացած), որ հայտնի է իր համեստությամբ, ժուժկալությամբ, հասարակական արդարության համար պայքարող: Սովորել է Գերմանիայում, չունի անձնական մեքենա ու վարորդ, փոխարենը նախընտրում է հասարակական տրանսպորտը, մտերիմներից է հրաժարյալ Պապին՝ Բենեդիկտ 16-րդին, այժմ՝ կարդինալ Ռացինգերին:

Վերջին 1000 տարվա ընթացքում Լատինական Ամերիկայից ընտրված առաջին Պապը օրհնեց ներկա բազմությանը, աշխարհի 1.2 միլիարդ կաթոլիկներին, աշխարհին մաղթեց սեր եւ համերաշխություն եւ Տերունական աղոթքով փակեց պատմական արարողությունը:

# Քրեակատարողական հիմնարկներում ոտնահարվում են անչափահասների իրավունքները

ՅՈՒՆԻՍԵՖ-ը, Եվրոմիության, ՄԻՊ գրասենյակի, Քաղաքացիական հասարակության ինստիտուտի եւ Միջազգային բանտային բարեփոխումների կազմակերպության համագործակցությամբ արդարադատության համակարգում ուսումնասիրել են անչափահասների հանդեպ դաժան վերաբերմունքի եւ խոշտանգումների մակարդակը: Ուսումնասիրությունը բացահայտել է մինչ դատավարությունը, դատավարության ընթացքում եւ քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անչափահասների իրավունքների լրջագույն ոտնահարման բազմաթիվ դեպքեր:

Ուսումնասիրության համար մասնագետները զրուցել են 82 անչափահասի հետ: Նրանց 21 տոկոսն իրազեկված չի եղել ձերբակալման պատճառների մասին, 42 տոկոսը չի կարդացել ձերբակալության արձանագրությունը նախքան ստորագրելը: Անչափահասների 31 տոկոսը խոստովանել է, որ իրենց երբեք չեն իրազեկել իրենց իրավունքների մասին: Պարզվել է, որ անչափահասների հարցաքննության դեպքերի գերակշռող մասի ժամանակ փաստաբաններ ներկա չեն եղել:

Անչափահասները պատմել են, որ իրավապահ մարմինների ներկայացուցիչները խոստովանություն ձեռք բերելու նպատակով իրենց հաճախ են ծեծի ու ֆիզիկական ճնշման ենթարկել: Անչափահասների 32 տոկոսը համոզված է եղել, որ դատավորը արդար չի գործել, դատավճիռն էլ արդար չէ: Դատավորները նման որոշում են կայացրել՝ հաշվի առնելով նախկինում դատված լինելը:

ՀՀ-ում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչ Հենրիետ Ահրենսի գնահատմամբ՝ թեպետ երեխաների խոշտանգումների դեպքերն այնքան էլ շատ չեն, սակայն հարցը լուրջ է, եւ պետք է միջոցառումներ ձեռնարկել՝ դեպքերը հասցնելու նվազագույնի:

ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով բաժնի պետ Նելլի Դուրյանի խոսքերով՝ այս տարի փետրվարին ստեղծվել է ոստիկանության՝ երեխաների իրավունքների պաշտպանության եւ ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչությունը, որը զբաղվում է նաեւ անչափահասներին վերաբերող բոլոր խնդիրներով:

Հ. Հ.

# Եփրեմ Վերդյանը (Եփրեմվերդին) կառավարություն է կազմել



«Ժառանգության» մամուլի խոսնակ Հովսեփ Խուրշուդյանը Եփրեմ Վերդյանին չի ճանաչում, թերեւս այս հարցը այդքան էլ կարեւոր չլիներ, եթե Եփրեմ Վերդյանը չաներ այն, ինչ արել է: Մարտի 12-ի երեկոյան այս անունով կամ այս անունով ներկայացող քաղաքացին էլեկտրոնային նամակներ է ուղել մի շարք ԶԼՄ-ների, որտեղ նշել է, որ «Ժառանգություն» կուսակցության նախագահի, ըստ ՀՀ շուրջ 37 տոկոս քաղաքացիների՝ ՀՀ ընտրված նախագահ Րաֆֆի Հովհաննիսյանը արդեն իսկ որոշել է իր ապագա կառավարության կազմը: Ստացվել էր մի բավականին ուշագրավ ցանկ, օրինակ՝ պաշտպանության նախարար՝ Ժիրայր Սեֆիլյան, ԱԳ նախարար Թերեզա Երիմյան, Ստյոպա Սաֆարյանին «տրվել էր» արտակարգ իրավիճակների նախարարությունը, Արմեն Մարտիրոսյանին՝ սպորտի ու երիտասարդության հարցերի... Պակաս ուշագրավ չէր, որ «Րաֆֆիի կառավարությունում» տեղ էին գտել նաեւ ՀՅԴ ներկայացուցիչներ. Արմեն Ռուստամյանին «շնորհված էր» տարածքային կառավարման եւ փոխվարչապետի պաշտոնը, իսկ Արծվիկ Մինասյանը պետք է «տնօրիներ» էներգետիկայի ու բնական պաշարների գերատեսչությունը: Չէր մոռացվել նաեւ հարգարժան ու սիրելի Սերժ Թանգյանը, ում «Րաֆֆին նշանակել էր» սփյուռքի նախարար, պակաս հետաքրքրական չէր նաեւ բնապահպանության եւ քաղաքաշինության նախարարների «կոմբինացիան», ըստ որի առաջին գերատեսչությունը պետք է «գլխավորեր» Մարիամ Սուխուդյանը, իսկ երկրորդը՝ ոչ պակաս բնապահպան Զարուհի Փոստանջյանը: Մնացյալ անունները հասարակական լայն խմբերի համար խիստ անծանոթ են, ավելին՝ այս ցուցակից, Հովսեփ Խուրշուդյանի խոստովանությամբ, իրեն ծանոթ է «երկու-երեք անուն միայն», հասկանալի է, որ Խուրշուդյանը հերքեց այս տեղեկատվությունը՝ վերագրելով «168 ժամ» պարբերականին, հերքված է նաեւ Րաֆֆի Հովհաննիսյանի ֆեյսբուքյան էջում:

Շատ լավ, դիցուք աշխարհում գոյություն չունի Եփրեմ Վերդյան անունով քաղաքացի, կամ եթե անգամ գոյություն ունի, ամենեւին կապ չունի այս ցուցակի հետ, բայց ցուցակն այս կա, չէ՞, ու եթե կա, ինչ-որ մեկը կազմել է, չէ՞... Սակայն նախքան այս հարցին պատասխանելը հիշեցնենք, որ մարտի 12-ին Ազատության հրապարակում Րաֆֆի Հովհաննիսյանն իր հրավիրած ասուլիսում ամենեւին էլ չհերքեց այն, որ, հնարավոր է, ինքը ընդունի իշխանության առաջարկությունը՝ կազմելու կառավարություն: Րաֆֆին մասնավորաբար ասաց, թե ինքը կհամաձայնի ընդունել Սերժ Սարգսյանի առաջարկությունները, եթե այդ առաջարկություններով հնարավոր լինի հասնել համակարգային, էական փոփոխությունների: Իսկ քանի որ կառավարություն կազմելը հենց այդ համակարգային, էական փոփոխություններն են ենթադրում, ուրեմն պրն Հովհաննիսյանը սկզբունքորեն չի բացառում, հնարավոր է համարում, որ ինքը կարող է եւ կառավարություն կազմել: Հետեւաբար, նույն օրը՝ երեկոյան «Ժառանգություն»-ից որեւէ մեկը կարող էր եւ կազմել այս «կառավարության ցուցակը» ու Եփրեմ Վերդյան ստորագրությամբ բաց թողնել հայկական մեդիա տիրույթ՝ իբրեւ ոչ պաշտոնական առաջարկություն կամ բանակցելու հիմք: Իհարկե, շատ հնարավոր է, որ այս ցուցակն ամենեւին էլ «ժառանգական» չի կազմել, այլ՝ իշխանական բեւեռից մեկը, բայց այդ պարագայում հարց է առաջանում, ինչո՞ւ, ի՞նչ նպատակով: Ցուցակում, ճիշտ է, չճանաչված մարդիկ կան, բայց ցուցակն ամենեւին էլ չի վարկաբեկում Րաֆֆիին, ինչի նպատակը գուցե իշխանական բեւեռում ունենան: Ուրեմն, եթե ցուցակն այս կազմվել է իշխանությունների կողմից, որոնք ցանկություն չեն ունեցել վարկաբեկելու Րաֆֆիին, ստացվում է, որ կազմվել է իբրեւ առաջարկություն, բանակցելու հիմք...

Ինչեւէ, անկախ ամեն ինչից, այս համապատկերում թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր բեւեռներից ոչ պակաս ուշագրավ են ինչում փոխադարձ պատրաստակամությունները՝ վերստին կազմակերպելու Սերժ Սարգսյանի ու Րաֆֆի Հովհաննիսյանի հանդիպումը, գուցե նաեւ այս օրակարգով, հնարավոր է՝ ոչ, բայց ցուցակը, եթե անգամ կազմողին իրականում Եփրեմ Վերդյան չեն կոչում, կա, միայն թե այդ ցուցակում նշված չէ վարչապետի անունը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ադրբեջանցիները, որ կասկածի տակ են դնում Բաքվի տեսակետը, որեւէ կերպ «պատժվում են»

**Այն ադրբեջանցիները, ովքեր համարձակվել են կասկածի տակ առնել Բաքվի պաշտոնական տեսակետը, այս կամ այն կերպ հետագայում պատժվել են, ինչպես նախկին նախագահ Ա. Մութալիբովը, լրագրող Ա. Ֆատուլաեւը կամ լուսանկարիչ Չ. Մուստաֆաեւը:**

**Այս հանգամանքի հատուկ շեշտադրությամբ հանդես է եկել Եգիպտոսում Հայաստանի դեսպան Արմեն Մելքոնյանը՝ եգիպտական ամենահեղինակավոր օրաթերթում՝ «Ալ Ահրամ»-ում: Դեսպան Մելքոնյանի հոդվածը լույս է տեսել ի պատասխան նույն թերթում տեղ գտած մեկ այլ հրապարակման, որտեղ աղավաղված ներկայացվել է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը, ինչպես նաեւ՝ Խոջալուի դեպքերը:**

**Դեսպան Մելքոնյանը, մասնավորապես, պարզաբանել է, որ Խոջալուի վերաբերյալ ադրբեջանական քարոզչության նպատակն է մոլորեցնելով միջազգային հանրությանը խուսափել Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Մարաղայում եւ այլուր իրականացրած հայերի ջարդերի եւ էթնիկ զտումների համար պատասխանատվությունից: Ներկայացնելով Խոջալուի մասին ճշմարտությունը՝ Հայաստանի դեսպանը ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ Բաքվի պաշտոնական տեսակետը կասկածի տակ դնելու համարձակություն ունեցող ադրբեջանցիները հետագայում այս կամ այն կերպ պատժվել են, ինչպես նախկին նախագահ Ա. Մութալիբովը, լրագրող Ա. Ֆատուլաեւը կամ լուսանկարիչ Չ. Մուստաֆաեւը:**

**Դեսպանը նշել է, որ ղարաբաղյան հակամարտությունն Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը մերժելու եւ խնդիրը բիրտ ուժի կիրառմամբ լուծելու ցանկության հետեւանքն է: Անդրադառնալով ադրբեջանցիների կողմից շահարկվող ՄԱԿ-ի ԱԽ բանաձեւերին՝ նա պարզաբանել է, որ դրանց գլխավոր նպատակը եղել է ռազմական գործողությունների դադարեցումը եւ խաղաղ բանակցությունների մեկնարկը, ինչը ժամանակին խուսափել է իրականացնել հենց Ադրբեջանը:**

**Արմեն Մելքոնյանի ընդգծմամբ՝ Հայաստանը հանձնառու է մնում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա իրականացվող բանակցային գործընթացին:**

**Վ. Պ.**

# Արթուր Բաղդասարյանը հանդիպել է Հնդկաստանի դեսպանին

**Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը երեկ ընդունել է Հայաստանում Հնդկաստանի նորանշանակ դեսպան Սուրեշ Բաբուին: Արթուր Բաղդասարյանը շնորհավորել է դեսպանին նշանակման կապակցությամբ ու մաղթել հաջողություն պաշտոնավարման ընթացքում: Նրանք հույս են հայտնել, որ երկու երկրների միջեւ հարաբերությունները առաջիկա տարիներին ավելի կզարգանան:**

# Էրդողանին տեղափոխել են Ստամբուլ

**Անկարայի Աթաթուրքի հիվանդանոցում հայտնված Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին երեկ գիշերը հատուկ ինքնաթիռով տեղափոխել են Ստամբուլ: Նրա առողջական վիճակը վատացել էր մարտի 12-ին:**

**Վկայակոչելով թուրքական TRT հեռուստաալիքը՝ «Արմենպրեսը» հայտնում է, որ Էրդողանին տեղափոխող ինքնաթիռը վայրէջք է կատարել «Սաբիհա Գյոքչեն» ռազմական օդանավակայանում, որտեղից Էրդողանը մեկնել է Սկյուտարի Քըսըքլը մասում գտնվող իր տունը:**

**Թուրքական «Միլլիեթ» թերթը մինչ այդ փոխանցել էր, որ հիվանդանոցում մի քանի ժամ մնալուց հետո Էրդողանը դուրս է եկել հիվանդանոցից ու ասել լրագրողներին, որ «մրսածության պատճառով մի քանի օր կհանգստանա», իսկ առողջական վիճակի վատանալու պատճառը «գրիպի վարակն է»: Էրդողանը նաեւ ասել է՝ վստահ է, որ բոլոր հետաձգված գործերը կկարողանա շարունակել շաբաթվա վերջում:**

# Վստահության ճգնաժամ

*1-ին էջից*

**Կարեւորն այն պիտի լիներ, որ հասարակությունը շոու չհամարեր դատաքննությունը, որ պատասխանող կողմ ԿԸՀ նախագահի, արդարադատության նախարարի եւ մյուսների խոսքը լայն հանրությունը չընկալեր անվստահորեն կամ հեգնանքով՝ ճիշտ ու սխալից անկախ: Որ նրանք ու նրանց ներկայացրած ինստիտուտները իսկապես վստահություն ներշնչեին լայն հասարակությանը, ու ոչ թե միայն երկրի ղեկավար շրջանակներին: Ու էլի բանն այն չէ, որ հայցվոր կողմը պատրաստի ապացույցներ չի ներկայացնում, ու Սահմանադրական դատարանը, ինչպես Հայաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչ Դավիթ Հարությունյանն է ասում, պետք է մի արկղ փաստաթղթերից իր գործը թողած ընկնի, ապացույց փնտրի:**

**Չէ ու չէ: Մենք չհասանք այն օրին, երբ Հայաստանի բարձր ինստիտուտները վստահություն ներշնչեն, ու անկախ նրանից, որ, այո, իմ տպավորությամբ էլ ապացույցները պակաս են, բայց հանրության լայն շերտերը, միեւնույն է, արդեն այս գլխից չկասկածեին, որ Սահմանադրական դատարանը կարող է արդար վճիռ կայացնել: Իմ անձնական հիասթափությունը 1996 թվականից է, երբ Վազգեն Մանուկյանի հայցը մերժվեց, թեեւ հավատում էինք, որ Մանուկյանն է հաղթել եւ ոչ թե Տեր-Պետրոսյանը: Այն ժամանակից շատ տարիներ անցան՝ տարի տարվա վրա ինչ-որ բաներ գուցեեւ փոխվեցին մեր պետությունում դեպի լավը, որոշ բաներ դեպի վատը գնացին, բայց ժողովրդի վստահությունն իր պետական կառույցների հանդեպ այդպես էլ չվերականգնվեց: Այդ վստահությունը շատ է պետք մեզ ընտրությունների ինստիտուտի, իրավապահ համակարգի, չինովնիկների, խորհրդարանի, բոլորի հանդեպ: Անգամ՝ ընդդիմության հանդեպ, որովհետեւ ընդդիմության տարբեր միավորներ եւս տարբեր ժամանակներում վարվել են ճիշտ իշխանավորների պես՝ ժողովրդի թիկունքում բանակցելով, ժողովդի վստահության պաշարով առուծախ անելով՝ առանց նրա գիտության:**

**Հիմա այս պայմաններում այսօր սպասում ենք Սահմանադրական դատարանի որոշմանը, ու անկախ նրանից, որ իսկապես, հայցվոր կողմը՝ թե՛ Րաֆֆի Հովհաննիսյանի ներկայացուցիչները, թե՛ Անդրիաս Ղուկասյանը, տարբեր օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով չեն կարողանում անվերապահ ապացույցներ ներկայացնել իրենց նշած ընտրախախտումների կամ ընտրության արդյունքների համատարած կեղծման վերաբերյալ, ժողովուրդը սկզբնապես արդեն անվստահություն է հայտնում ՍԴ կայացնելիք որոշման հանդեպ:**

**Նույնը նաեւ ընդդիմությանն է վերաբերում. ասենք՝ այնքան վստահ լինի հանրությունը, որ ոստիկանապես Վովա Գասպարյանի այցելությունը Րաֆֆուն որեւէ հարց չառաջացնի՝ ոստիկանապետը միայն Րաֆֆու առողջությամբ ու անվտանգությամբ է անհանգստացած (ոստիկանապետը Րաֆֆուն այցելել էր երեկ, ու վերջինս, իր երեկվա ասուլիսին ասաց, թե շնորհակալություն է հայտնել ոստիկանության պահվածքի համար ու ասել, որ եթե սպանվում լինի՝ կլինի միայն դիմացի մայթից):**

**Ընդհանրապես՝ անվստահությունն ամենուր է եւ ամեն ինչի հանդեպ է, թեւածում է մեր օդում, ու եթե ինչ-որ անհայտ հասցեից Րաֆֆի Հովհաննիսյանի կազմած ստվերային կառավարության կազմի ցուցակ ես ստանում, միանգամից սպրդում է կասկածը, թե դա ո՞ւմ սադրանքն է՝ այնքան, որ վստահություն չկա եւ ոչ մեկի ու ոչ մի կառույցի հանդեպ:: Բոլոր դեպքերում՝ Ր. Հովհաննիսյանը խոստացել է իրենց բոլոր ծրագրերը հայտնի անել ուրբաթ օրվա հանրահավաքում, բայց եթե այդ օրն էլ խաբստան ու ուղղակի ժամանակի ռեսուրսը վատնեն, հանրության վստահության պաշարն էլի է սպառվելու: «Բացահայտեք դրա աղբյուրը: Սա բացարձակ ապատեղեկատվություն է: Նման անուններ, պաշտոններ գոյություն չունեն ոչ իմ մտքում, ոչ թղթի վրա: Եթե որեւէ մեկը բացահայտի այդ հանելուկը, ես սիրով կլսեմ ձեզ»,- նշեց երեկ Ր. Հովհաննիսյանը՝ անհայտ հասցեից տարածված իբր Րաֆֆու կառավարութեան ստվերային կառավարության ցուցակի վերաբերյալ:**

**Մեր ընթերցողի տեղեկություն ստանալու իրավունքն հարգելով՝ նշենք, որ երեկ Ր. Հովհաննիսյանին այցելել են ՀԱԿ խմբակցությունից Նիկոլ Փաշինյանը, Լեւոն Զուրաբյանն ու Արամ Մանուկյանը, իսկ նախորդ օրը Ազատության հրապարակում Րաֆֆու հետ զրուցել էր Արամ Սարգսյանը:**

**Րաֆֆի Հովհաննիսյանը երեկ նաեւ նշեց, թե Սերժ Սարգսյանին ասելիք այլեւս չունի, արդեն թող նա համապետական լուծում առաջարկի, ինք էլ կորոշի՝ ընդունել, թե՞ ոչ:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Եվրոպական օգնության ծրագիրն ավարտվեց

*Ամփոփվեցին «Թվինինգ» ծրագրի արդյունքները*

Ավարտվում է Եվրոմիության (ԵՄ) «Թվինինգ» ծրագիրը, որը տեւեց 2 տարի եւ ուղղված էր Հայաստանում մրցակցային դաշտի բարելավմանը: Ծրագրի արդյունքներն ամփոփող համաժողովը երեկ տեղի ունեցավ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում, որին մասնակցում էին կառավարության անդամներ, դեսպաններ, միջազգային փորձագետներ:

Էկոնոմիկայի նախարար **Տիգրան Դավթյանն** իր ելույթում կարեւորեց «Թվինինգ» ծրագրի նշանակությունը Հայաստանի տնտեսական դաշտում, նշելով, որ այդ նպատակով հատկացված միջոցները արդյունավետ են ծախսվել, ինչը թույլ է տվել եվրոպական փորձը ներդնել Հայաստանում:

Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ **Արտակ Շաբոյանը** նշեց, որ ծրագրի իրականացումը նպաստել է հանձնաժողովի կարողությունների զարգացմանը: ԵՄ փորձագետների մասնակցությամբ իրականացված օրենսդրական փոփոխությունների, հարուցված վարույթների, դատարանում առկա գործերի վերաբերյալ խորհրդատվությունների շնորհիվ էլ բարձրացել է հանձնաժողովի աշխատանքի արդյունավետությունը: Որպես իր ասածի վկայություն՝ հանձնաժողովի նախագահը հիշատակեց հետեւյալ ցուցանիշները՝ 2012-ին հանձնաժողովը մրցակցային օրենսդրության խախտումների համար կայացրել է 215 որոշում, 2011-ի 197, 2010-ի 107, իսկ դրան նախորդող տարիներին՝ մոտ երեք տասնյակ որոշումների դիմաց: Տուգանքների չափերը նույնպես ավելացել են՝ կազմելով 245 մլն դրամ: Նկատի ունենալով վերոնշյալ հանգամանքները, ավելացել են նաեւ հանձնաժողովի որոշումների դատական կարգով բողոքարկումները, սակայն, Արտակ Շաբոյանի տեղեկացմամբ, մինչ այժմ չեն եղել դատական կարգով այդ որոշումներն անվավեր ճանաչելու դեպքեր:

Հանձնաժողովի գործունեության արդյունքների վերաբերյալ միջազգային գնահատականները նույնպես բարելավվել են: Արտակ Շաբոյանը տեղեկացրեց, որ գերիշխող դիրքի գործոնով Հայաստանի մրցակցային դիրքերն անցյալ տարի բարելավվել են 43 կետով: Դա ամենամեծ առաջընթացն է եղել բոլոր երկրների մեջ, երբ մեր հարեւան երկրներում այս ցուցանիշը կամ անփոփոխ է մնացել, կամ վատթարացել է: Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությամբ ունեցել ենք 22 կետով առաջընթաց, տեղական մրցակցության բարելավման ուղղությամբ՝ 9 կետով: Հանձնաժողովի նախագահը տեղեկացրեց, որ այս գնահատականները կազմել են միջազգային կառույցները՝ գործարարների շրջանում արված գաղտնի հարցումների հիման վրա:

Հայաստանում Եվրոմիության պատվիրակության ղեկավար **Թրայան Հրիսթեան** այն տեսակետը հայտնեց, որ Հայաստանի համար մրցակցային միջավայրը կարեւոր նշանակություն ունի ԵՄ-ի հետ խոր եւ համապարփակ ասոցացման գործում: Կարտելների, մոնոպոլիաների, հակամրցակցային համաձայնությունների դեմ պայքարի, պետական աջակցության վերահսկողության հարցերում Հայաստանը պետք է մոտենա Եվրոպային, ուստի Եվրոմիությունը կշարունակի աջակցել այս ծրագրին:

Գերմանիայի փոխդեսպան **Քրիստոֆ Բրյինգը** նույնպես անհրաժեշտ համարեց կարտելների եւ մոնոպոլիաների ազդեցության նվազեցումը Հայաստանի տնտեսության մեջ: Նրա հավաստմամբ, մրցակցությունը միայն գները չեն, կան այլ գործոններ, որոնք խանգարում են արդար մրցակցությանը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



# Արտակ Շաբոյան. «Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունն առավել քան տարօրինակ էր»

Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանը, երեկ, պատասխանելով լրագրողների հարցին՝ նախօրեին հանձնաժողովի գործունեության վերաբերյալ մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) արված հայտարարության կապակցությամբ, այդ հայտարարությունն առավել քան տարօրինակ համարեց: Ըստ նրա, հայտարարության մեջ, նշելով, որ կան հակամրցակցային համաձայնություններ եւ պայքար չի տարվում դրանց դեմ, ՄԻՊ-ը չի դիմում հանձնաժողովին՝ տեղեկացնելով այդ փաստերի մասին: Դա այն դեպքում, երբ հանձնաժողովը դիմել է ՄԻՊ-ին եւ խնդրել նման փաստեր լինելու դեպքում հայտնել հանձնաժողովին: Մինչ այժմ ՄԻՊ-ի կողմից մեկ նման դիմող է եղել՝ քաղաքացին դժգոհել է «Արմենթելից», ինչը քննարկվել է, եւ պարզվել, որ դժգոհությունը հիմնավորված չի եղել: Այն դիտարկմանը, թե պաշտպանը նշել է, որ հատվածական են ուսումնասիրվել հակամրցակցային դրսեւորումները, Արտակ Շաբոյանը պատասխանեց, որ պաշտպանը թող նշի տնտեսության այդ հատվածները, որտեղ կան այդ խնդիրները, եւ հանձնաժողովը կզբաղվի դրանցով: Նա նշեց, որ հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ բազմաթիվ նման խնդիրներ է արձանագրել եւ որոշումներ կայացրել:

Հանձնաժողովի գործունեության մասին խոսելով՝ Արտակ Շաբոյանը երեկ հայտնեց նաեւ, որ այս տարի շեշտը դրվելու է պետական գնումների ոլորտում հսկողության վրա: Այդ նպատակով օրենսդրական փոփոխություններ են նախատեսվում՝ տուգանքների մեծացման եւ խստացման, ապացուցողական բազայի մեծացման ուղղությամբ:

Ձվի շուկայում հնարավոր թանկացումների մասին տրված հարցին հանձնաժողովի նախագահը պատասխանեց, որ հրավիրվել են արտադրողները եւ զգուշացվել թանկացումների անթույլատրելիության մասին, որը կարող է դիտարկվել որպես հակամրցակցային համաձայնություն: Այդուհանդերձ, արդեն իսկ տեղի ունեցած գնի փոքր բարձրացման առնչությամբ էլ Արտակ Շաբոյանն ասաց, որ այդ հարցն այժմ հանձնաժողովը քննարկում է:

«**Ազգի**» հարցը՝ ուղղված Արտակ Շաբոյանին, վերաբերում էր պանրի գների վերջին մեկ ամսվա թանկացումներին, նա նշեց, որ այդ շուկան մրցակցային է, իսկ հանձնաժողովի փորձագետներից մեկը դա պայմանավորեց կաթի մթերման գնի թանկացմամբ, ինչն իր հերթին պայմանավորված է սեզոնային գործոնով:

Ա. Մ.

**ՄՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

# Համագործակցություն առիթմոլոգիայի ոլորտում

Սրտի ռիթմի եվրոպական ընկերությունը (European Heart Rhythm Association) արձանագրել է լուրջ առաջընթաց սրտի ռիթմի խանգարման, դրա հետեւանքով մահացության ցուցանիշների կրճատման ու բնակչության կյանքի որակի բարելավման գործում:

Ընկերության նախագահ, պրոֆեսոր **Անժելո Աուրիչիոն**, որը հիմա Հայաստանում է, երեկ հանդիպել է առողջապահության նախարար **Դերենիկ Դումանյանին** ու ներկայացրել իրենց ունեցած ձեռքբերումները, այդ թվում եւ ընկերության անդամ 55 երկրների՝ 2008 թվականից ի վեր ունեցած առաջընթացը հավաստող վիճակագրական տվյալները:

Առողջապահության նախարարության փոխանցմամբ՝ Սրտի ռիթմի եվրոպական ընկերությունը վերլուծել է նաեւ ոլորտում Հայաստանի ունեցած հնարավորությունները: Առաջիկա տարիներին ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում նույնպես կավելանա սրտանոթային հիվանդություններ ունեցողի թիվը, ինչից դրդված էլ անհրաժեշտ է ավելացնել համապատասխան ծառայություններ կատարող բուժկենտրոնները: Անժելո Աուրիչիոն տեղեկացրել է, որ Սրտի ռիթմի եվրոպական ընկերությունը պատրաստակամ է աջակցելու Հայաստանում առիթմոլոգիական ծառայության զարգացմանը:

«Ինչպես ողջ աշխարհում, Հայաստանում էլ հիվանդացության ամենաբարձր ցուցանիշը սրտային հիվանդություններինն է ու մահացությունների կեսի պատճառը դարձյալ սիրտ-անոթային հիվանդություններն են: Հետեւաբար, հաշվի առնելով այս ցուցանիշներն ու կանխատեսումները, ցանկանում ենք Սրտաբանության գիտական ինստիտուտում կազմակերպել առիթմոլոգիական երկրորդ ծառայությունը, եւ այդ հարցում մենք ձեր աջակցության անհրաժեշտությունը կունենանք», ասել է Դերենիկ Դումանյանը:

Անժելո Աուրիչիոն պատասխանել է, որ պատրաստ են հայ մասնագետներին սովորեցնել անգամ հեռակա կարգով, եւ խոստացել է ուղարկել անվճար ուսուցման ծրագիրը:

Նախարար Դումանյանը նշել է, որ սրտաբանության որոշ ճյուղերում Հայաստանը եւս լուրջ առաջընթաց արձանագրել է. այստեղ զարգացել է հատկապես սրտային վիրաբուժությունը, պետությունը ներդրումներ է կատարել նոր բուժկենտրոններ բացելու, մասնագետների պատրաստելու նպատակով: Այս տարվանից 2 նոր բուժկենտրոն կգործի Շիրակի ու Սյունիքի մարզերում: Բայց եւ այնպես, առիթմոլոգիայի ոլորտում անելիքներ դեռ շատ կան:

Ի. Պ.

# Օրենսդրության կարգավորման կենտրոնը նոր գործընկերներ է գտնում

«Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի նպատակն է էականորեն թեթեւացնել բիզնեսի եւ քաղաքացու վրա ընկնող կարգավորումների բեռը՝ առնվազն երկու անգամ կրճատելով նրանց գործառնական ծախսերը: Մենք այժմ ուսումնասիրություններ պետք է սկսենք հարկային օրենսդրության դաշտում: Սա այն ոլորտներից է, որտեղ ամենամեծ խնդիրներն են առաջանում գործարարների համար: Մենք պետք է պարզեցնենք այս օրենսդրությունը, կրճատենք ծախսերը: Այս ոլորտը պետք է ավելի քիչ ժամանակ եւ գումար խլի բիզնեսից եւ քաղաքացիներից: Հայաստանի հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիան մեզ այս հարցում կարող է մեծ աջակցություն ցույց տալ», երեկ հայտարարեց Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի տնօրեն **Արմեն Եղիազարյանը**՝ Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի ու Հայաստանի հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիայի միջեւ փոխըմբռնման հուշագրի ստորագրման ժամանակ: Հուշագրով պատրաստակամություն է հայտնվում համատեղ աշխատանքներ իրականացնելու հաշվապահական հաշվառման եւ աուդիտի, հարկային, ինչպես նաեւ փոխադարձ համաձայնեցված այլ ոլորտներում օրենսդրությամբ սահմանված կարգավորումները կրճատելու նպատակով:

Պատասխանելով «**Ազգի**» հարցին, որը վերաբերում էր պետական տարբեր կառույցների կողմից առաջացող դիմադրությանը կենտրոնի կողմից ներդրվող նոր աշխատանքին, Ա. Եղիազարյանը նշեց, թե աշխատանքն այնպիսին է, որ շահերի բախում միշտ էլ առաջանում է, ու այդ իմաստով դիմադրություն կա, կլինի եւ դեռ կավելանա, սակայն կարեւոր է առավել լայն զանգվածների շահերը պաշտպանելը:




Հայաստանի հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիայի խորհրդի նախագահ **Ահարոն Չիլինգարյանն** ընդգծեց, որ որոշել են միավորել երկու կառույցների ջանքերը՝ առավել բարձր արդյունավետության հասնելու համար: Իսկ համագործակցության ձեւը բխում է նպատակից: Հաշվապահների եւ աուդիտորների նպատակն է տալ կազմակերպությունների վիճակի, հնարավորությունների առավել ամբողջական պատկերը: Եթե դրա համար անհրաժեշտ է լինում գործ ունենալ բազմաթիվ օրենսդրական ակտերի հետ, ապա դրանց պարզեցումն ու հստակեցումը հնարավորություն կտան դրան հասնել առավել կարճ ժամանակահատվածում՝ խնայելով և՛ միջոցներ, և՛ ժամանակ:

# 92-տարի առաջ

**Բեռլին, 1921 թվականի մարտի 15:** Հարդենբերգ փողոցի թիվ 17 տան առջեւ գնդակահարվեց Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ Թալեաթ փաշան: Գործողության կատարողը 25-ամյա հայ վրիժառու Սողոմոն Թեհլիրյանն էր, որը Բեռլին էր ժամանել Թալեաթի նկատմամբ մահավճիռ իրականացնելու: Մինչ այդ հայ հետախույզները Շահան Նաթալիի ղեկավարությամբ Բեռլինում մեծ աշխատանք էին կատարել եւ հայտնաբերել էին Թալեաթի բնակարանը, Հարդենբերգ պողոտա թիվ 4 հասցեում, որտեղ մեծ ոճրագործը բնակվում էր Ալի Սալիհ բեյ անվամբ:

Նա մի քիչ թեքվեց ու փորձեց հետ նայել, որ խուսափի հարվածից, բայց չհասցրեց: Ատրճանակը հանելն ու Թալեաթի ծոծրակին կրակելը միայն մեկ ակնթարթ տեւեց: Թալեաթը հարվածից ցնցվեց եւ շրմփալով տապալվեց մայթի վրա: Կրակելու պահին նրանցից մի քանի քայլ հեռու անցնում էր մի կին, որը կրակոցի ձայնից ճչաց եւ վայր ընկավ: Սողոմոնը շփոթվեց, չկարողացավ տեղում մնալ: Ատրճանակը դեն նետեց, փորձեց հեռանալ, բայց ձերբակալվեց եւ տարվեց ոստիկանատուն:

Թալեաթի դիակը բավականին ժամանակ մնացել էր մայթին: Գլխի շուրջը արյան լճակ էր

պետական պաշտոնյաներից, դատավարությանը մասնակցում էին 12 երդվյալ ատենակալ, 3 դատապաշտպան, 2 թարգմանիչ եւ 27 վկա:

Դատավարության ընթացքում բացահայտվեցին երիտթուրք պարագլուխների հանցագործությունները: Գերմանացի հայրենասեր դոկտոր Յոհաննես Լեփսիուսը մեծ ծառայություն մատուցեց՝ հիշատակելով մի շարք պատմական փաստեր: Նա բացահայտեց թուրք ոճրագործների բուն նպատակները: Նրա խոսքը շշմեցուցիչ տպավորություն թողեց ոչ միայն անտեղյակ հասարակության, այլ նաեւ դատական նիստի մասնակիցների վրա: Նրա խոսու-

դատավճիռ), ստացվեց ճիշտ հակառակը»: Ինչպես երեւում է տիկին Թալեաթի պատմածից, թուրքերը հասցրել էին «տեսնել» դատավորին, սակայն արդարության դեմ նա էլ ոչինչ չկարողացավ անել: Դատավճիռը որոշում էին երդվյալները: Տիկին Թալեաթը հիշեցնում է նաեւ ոճրագործի հետեւյալ խոսքը. «Անհնար է, որ ես իմ անկողնու մեջ մեռնեմ: Անգլիացիք կամ հայերը ինձ կսպանեն, դա լավ իմացեք: Դրանցից պրծում չկա»:

Երբ դատարանի քարտուղարը վերջացրեց մեղադրական եզրակացության ընթերցումը, նախագահ դոկտ. Լեմբերգը հարցրեց մեղադրյալին, թե արդյոք նա իրեն

# Արդար վրեժի մեկ կրակոց Բեռլինի Հարդենբերգ պողոտայում

## *Սողոմոն Թեհլիրյանի վրիժառության գործողության առթիվ*

Հետապնդումները դյուրացնելու նպատակով ընկերներին հաջողվում է Սողոմոնի համար սենյակ վարձել Հարդենբերգ պողոտայի թիվ 37 տանը, որի պատուհանից կարելի էր հսկել Թալեաթի անցուդարձը: Այժմ Շահան Նաթալին Սողոմոնին է հանձնում ատրճանակը ասելով. «Ահա քեզ զենքը, որ ուզում էիր: Փորձված է եւ ստուգված, սպասում է միայն ցուցամատիդ հրամանին: Կպայթեցնես գանգը թիվ 1 ազգասպանին եւ չփորձես փախչել. կկանգնես տեղդ, ոտքդ սատակին վրա եւ կհանձնվես ոստիկաններին, որոնք կգան ու կձերբակալեն քեզ»: Շահանի նպատակն էր Ս. Թեհլիրյանի դատավարությունը վերածել Մեծ եղեռնի պատասխանատուների քաղաքական հրապարակային դատավարության:

Մարտի 15-ի առավոտյան Սողոմոնը արթնացավ սովորականից շուտ, թեյեց եւ պատրաստվում էր բազկաթոռը մոտեցնել պատուհանին գիրք կարդալու համար, երբ դիմացի տան պատշգամբում տեսավ Թալեաթին:

Վերջինս ուշադիր զննեց փողոցը, հավանաբար ինչ-որ բանից զգուշանում էր: Չնայած իր կատարած ոճրագործությունից անցել էր վեց տարի, բայց վախը անբաժան էր մնացել նրանից: Իր լայն ուսերին կրում էր երկու հրապարակային մահավճիռներ. մեկը՝ Կ. Պոլսի զինվորական դատարանի, մյուսը՝ Հայ Հեղափոխական դաշնակցության: Եթե առաջին մահավճռից նա կարողացել էր խուսափել եւ թաքնվել, ապա երկրորդ մահավճիռը անպայման պետք է ի կատար ածվեր, որտեղ էլ թաքնվեր ոճրագործը:

Թալեաթը նայեց ժամացույցին: Ուղիղ ժամը 11-ն էր: Նա դուրս եկավ փողոց եւ բռնեց իրենց հավաքատեղը տանող ուղին: Վերցնելով զենքը՝ Սողոմոնը իջավ փողոց եւ գնաց նրա հետեւից: Հուզմունքը պատել էր նրան, սակայն զգում էր, որ ոճրագործը իր ձեռքից չի ազատվի: Զուգահեռ մայթով արագացնելով քայլերը՝ Սողոմոնը բավականին առաջացավ Թալեաթից, ապա կտրելով փողոցը եւ անցնելով հանդիպակաց մայթը՝ վճռականորեն գնաց ոճրագործին դեմ հանդիման: Իսկ Թալեաթը հանդարտ քայլերով, անփութորեն ճոճելով ձեռնափայտը, գալիս էր իրեն ընդառաջ: Հավասարվելու պահին նրանց հայացքները հանդիպեցին:

Թալեաթ,- դիմեց նրան Սողոմոնը:

Մեծ մարդասպանի աչքերում առկայծեց մահվան սարսուռը:

առաջացել: Տեղի էր ունեցել մի ֆանտաստիկ, մի անհավանական բան, ինչը հաջորդ օրը ապացուցվել էր դատաբժշկական փորձաքննությամբ եւ տեղանքի զննությամբ: Ականջի տակից մտած գնդակը փշրել էր գանգը եւ դուրս եկել ճակատային մասից, հանելով ձախ աչքը, ապա, դիպչելով դիմացի տան մետաղական ցանկապատին, անդրադարձել եւ մտել աջ աչքը: Հիրավի արդար դատաստան մեծ ոճրագործին:



Նույն օրը երեկոյան Սողոմոնին տարան հարցաքննության: Սենյակում, որտեղ պետք է անցկացվեր հարցաքննությունը, դրված էր մի սեղան, որի վրա նա տեսավ իր ատրճանակը, ինչպես նաեւ Թալեաթի ձեռնափայտը եւ արյունոտ գլխարկը: Սեղանի առջեւ նստած ակնոցավոր պաշտոնյան փորձեց սկսել հարցաքննությունը, սակայն առանց թարգմանչի ոչինչ չստացվեց: Հաջորդ օրը հարցաքննությունը կատարվեց թարգմանիչ Գեւորգ Գալուստյանի օգնությամբ: Քննիչի այն հարցին, թե գիտե՞ արդյոք ամբաստանյալը, որ իրեն մահապատիժ է սպառնում, Սողոմոնը հանգիստ պատասխանեց. «Այո, գործս կատարելուց հետո ինչ ուզում է՝ թող լինի»:

Հայկական գաղութներում արտակարգ ցնծություն էր: Լրագրերը դեպքին ընդարձակ էջեր էին նվիրում՝ այն գնահատելով իբրեւ հայ ժողովրդի արդար վրեժի հատուցում:

Այս առնչությամբ ռուսական բոլշեւիկյան «Պրավդա» թերթում տպագրվել է Կ. Ռադեկի գրած մահախոսականը, որտեղ նա սգում է հայ տեռորիստի կողմից սպանված արտասովոր քաղաքական գործչի անժամանակ մահը, եւ «Խորհրդային Հայաստանը» վերատպագրել է այդ մահախոսականը, շեշտելով, որ հայ կոմունիստները նույնպես «սգում» են ընկեր Թալեաթի մահը:

Պատրաստվելով Սողոմոն Թեհլիրյանի հրապարակային դատավարությանը՝ հայ համայնքը հրավիրել էր Բեռլինի երեք նշանավոր փաստաբանների. դոկտորներ ֆոն Գորդոնին, Վերթաուերին, Նիմայերին:

Դատավարությունը սկսվեց 1921 թ. հունիսի 2-ին Բեռլինի նահանգային դատարանում եւ տեւեց ընդամենը երկու օր: Բացի

քից հետո ստեղծվեց այնպիսի իրավիճակ, որ դատվողը կարծես ոչ թե Սողոմոնն էր, այլ՝ Թալեաթը:

Դատավարության առաջին օրը դատական նիստին ներկա էր նաեւ Թալեաթի այրին, որը սպանությունից 60 տարի անց՝ 1981 թվին, երբ արդեն 89 տարեկան էր, անդրադառնալով ոճրագործի սպանությանը, կասի հետեւյալը. «Ես մեծացել եմ ոսկիների մեջ, քնել ոսկե օրորոցներում, բայց ամբողջ աշխարհը սեւացավ վրաս այն օրը, երբ սպանեցին ամուսնուս: Նա շատ ջանք ու եռանդ էր գործադրել, որպեսզի հայերը հայկական կոտորածներին այլեւս հետամուտ չլինեն եւ ընթացք չտան: Սակայն հայերը դրան ուշադրություն չդարձրեցին: Բեռլինում, այդ առավոտյան Թալեաթը չէր ուզում դուրս գալ տնից, հակառակ նրան, որ շատ էր սիրում զբոսնել: Անհանգստություն նկատեցի: Սակայն նա դուրս եկավ տանից: Որոշ ժամանակ անց դուռը թակեցին, եւ դիմացս հայտնվեցին դոկտոր Նազիմն ու Սալոնիկի նախկին երեսփոխան Մազլյան Էֆենդին: Հասկացա, որ մտավախությունս կատարվել էր: Սպանված էր ամուսինս, գնացինք դիարան եւ տեսանք մարմինը»: Այնուհետեւ շարունակելով իր պատմությունը, տիկ. Թալեաթը նկատել է տալիս, «որ շնորհիվ հայկական քարոզչության Բեռլինի մեջ դատվեցավ ոչ թե Թեհլիրյանը, այլ թուրքական պետությունը: Չնայած դատավորը հավաստիացրել էր, որ ահաբեկիչը անպայման կպատժվի եւ դատարանից դուրս կգա նրա դիակը (այսինքն՝ կկայացվի մահվան

մեղավոր ճանաչո՞ւմ է Թալեաթ փաշային կանխամտածված սպանելու մեջ, Սողոմոնը պատասխանեց. «Ո՛չ: Մարդ եմ սպանել, բայց ես մարդասպան չեմ: Իմ խիղճը հանգիստ է»:

Դատավարության երկրորդ օրը ելույթ ունեցավ պետական մեղադրողը, որը պահանջեց Սողոմոնին հանցավոր ճանաչել Թալեաթ փաշային կանխամտածված սպանելու համար: Միաժամանակ նա արեց ամեն հնարավորը, որպեսզի դատավարությունը քաղաքական բնույթ չստանա, ինչը նրան հաջողվեց մասամբ: Նրանից հետո ելույթ ունեցող փաստաբանները եւ հատկապես դոկտոր ֆոն Գորդոնը փաստերով ապացուցեցին, որ Թալեաթին սպանելու համար Սողոմոնը մեղավոր չէ: Բանավեճը ավարտվեց: Դատարանի նախագահ դոկտ. Լեմբերգը երդվյալներին անհրաժեշտ պարզաբանումներ տվեց, որից հետո նրանք անցան առանձնասենյակ՝ խորհրդակցելու: Մեկ ժամ տեւեց այդ խորհրդակցությունը, վերադառնալով դահլիճ՝ նրանց գլխավորը կարդաց.

«Պատվով եւ խղճով վկայում եմ երդվյալների որոշումը՝ հանցավո՞ր է ամբաստանյալ Սողոմոն Թեհլիրյանը 1921 թվի մարտի 15-ին Շառլոտենբուրգի մեջ կանխամտածված մի մարդ՝ Թալեաթ փաշային սպանելու համար»: ՈՉ, Օտտո Ռայնիկե, երդվյալների գլխավորը:

Դահլիճը դղրդաց որոտընդոստ ծափերից: Նախագահը ստորագրեց որոշումը՝ հայտարարելով, որ ամբաստանյալը ազատ է արձակվում, եւ որ բանտարկության հրամանը նրա վրայից վերացվում է: Երբ Սողոմոնը հայտնվեց փողոցում, այնտեղ հավաքված բազմությունը օվացիա սարքեց նրա պատվին: Ձեռքերի վրա նրան տարան դեպի ինքնաշարժը...

Այսպիսով, Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը վերածվեց երիտթուրք ոճրագործների հրապարակային դատավարության: Սա պատմական փաստ է, իրադարձություն, որը սկիզբ դրեց հայերի ցեղասպանության ճանաչմանը: Հենց սա է Սողոմոն Թեհլիրյանի վրիժառուական գործողության պատմական նշանակությունը:

Նշանավոր վրիժառուն մինչեւ 1951 թիվը բնակվել է Բելգրադում, 1957 թվականին տեղափոխվել է ԱՄՆ, Սան Ֆրանցիսկո, որտեղ էլ մահացել է 1960 թվին:

Փառք ու պատիվ իրեն:

ՌՈՍՏԻԿ ՀՈՎՆԱՆՅԱՆ

***ԲԱՔՈՒ***

# «Քաղաքական էմանսիպացիա»՝ ադրբեջանական ձեւով

**Պարզվում է, հարեւան երկրում «ազատորեն գործող» հասարակական կազմակերպություններից մեկն էլ կոչվում է «Ակսակալների խորհուրդ», որ վերջերս գումարեց հերթական 6-րդ համագումարը: Եվ, «պաշտպանելով աշխատավորների շահերը ներկայացնող՝ արհմիութենական կազմակերպությունների համադաշնության միակ ճիշտ որոշումը», իր հերթին հավանություն տվեց, որ «նախագահի ծանր եւ պատասխանատու աշխատանքը» երրորդ ժամկետով շարունակի կատարել «համազգային առաջնորդի գործի արժանավոր շարունակող» Իլհամ Ալիեւը:**

**«Ակսակալների խորհրդի» համագումարին, չգիտես ինչու, ներկա չէր Հեյդար Ալիեւի հարազատ եղբայրը՝ ակադեմիկոս Ջալալ Ալիեւը: Բացակա էր նաեւ Ռամիզ Մեհթիեւը: Փոխարենը առիթն օգտագործել եւ սեփական հեղինակության «Տնտեսագիտական հանրագիտարանը» շնորհանդեսի էր ներկայացրել ակադեմիկոս, Միլլի մեջլիսի տնտեսական հարցերի կոմիտեի նախագահ, նախկինում Ադր. ԿԿ Կենտկոմի քարտուղար Զիադ Սամեդզադեն: Հունձը չափազանց առատ էր. դահլիճի նախասրահ տարված «հանրագիտարանի» բոլոր օրինակներն սպառվեցին կայծակնային արագությամբ՝ մեկ օրինակը 50 մանաթով:**

**Այլ կերպ չէր լինի: Սամեդզադեն հասցրել էր շատերին ի լուր տեղեկացնել, որ «հանրագիտարանն ստեղծվել է, որպեսզի ցույց տրվի, թե ինչպիսի տնտեսական հաջողությունների է հասել Ադրբեջանը՝ շնորհիվ Հեյդար Ալիեւի մշակած զարգացման հայեցակարգի»: Այդքանից հետո ո՞վ կհանդգներ խնայողություն անել եւ իր հետ տուն չտանել «Տնտեսագիտական հանրագիտարանի» բոլոր հինգ հատորներից գոնե մեկական օրինակ: Փառք աստծո, որ հավաքվածները ոչ թե շարքային, այլ տիտղոսակիր-ձեռնարկատեր ակսակալներ էին:**

**Բայց զավեշտն առջեւում էր: «Ակսակալների խորհրդի» համագումարի ծափողջույնները դեռ չէին մարել, երբ մամուլում տեղեկատվություն հայտնվեց, որ սեփական հասարակական կազմակերպություն հիմնադրելու եւ քաղաքական գործընթացներին մասնակից դառնալու հայտ են ներկայացրել նաեւ... «սպիտակահեր կանայք»: Եթե «ճերմակամորուս» շողոքորթները կարող են համագումար հրավիրել, պաշտպանել «համազգային թեկնածու» Իլհամ Ալիեւին, ապա հանուն էմանսիպացիայի եւ սոցիալական արդարության նույնը չպիտի՞ անեն նաեւ «ճերմակահեր կանայք»: Ահա այս հիմնավորմամբ էլ ստեղծվել է «Ճերմակահեր կանանց» հասարակական կազմակերպություն ստեղծելու նախաձեռնող խումբ: Բայց հայտնի չէ՝ ում գլխավորությամբ:**

**Իսկ նախաձեռնողների ինքնությունը չի հրապարակվում, քանի որ վարչախումբը դեռեւս չգիտի՝ «ճերմակահեր կանայք» իրո՞ք Իլհամ Ալիեւի թեկնածությունն են պաշտպանելու, թե՞ «կանանց գունդ զորաշարժելու» գաղափարը պատկանում է Մեհրիբան Ալիեւային, եւ դրա տակ ինտրի՞գ կա: Մեկ էլ տեսար «ճերմակահեր կանայք» հավաքվեցին եւ նախագահի թեկնածու առաջադրեցին Մեհրիբան խանումին...**

**Ահա այս հարցականի վրա էլ Ադրբեջանում առկախվել է «քաղաքական էմանսիպացիան»: Կա թերեւս ուրիշ մտահոգություն էլ. Միլլի մեջլիսի նիստում պատգամավոր Ֆազիլ Աղամալին պնդել է, որ «շատ բարձրաստիճան պաշտոնյաների մայրեր հայ են»: Գուցե վարչախումբը զգուշանում է, որ «ճերմակահեր կանանց» կազմակերպությանը նաեւ Աղամալիի նշած պաշտոնյաների մայրերը կանդամագրվե՞ն...**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Ստեփանակերտի ավերումը՝ պետական որոշում

Ժամանակ առաջ լույս է տեսել «История геноцида: обреченный Ходжалы» վերտառությամբ մի գիրք: Հեղինակը Տասյան Ջալաձեն է: Դա փորձ է ոչ թե ճշմարտությունը բացահայտելու կամ գոնե փաստերը շարադրելու անաչառ հետեւողականությամբ, այլ՝ «ապացուցելու, որ կատարվածը ցեղասպանություն է, որի համար պատասխանատու են ինչպես հայերը, այնպես էլ Ադրբեջանի նախկին նախագահ Այազ Մութալիբովը:

Գրքի «խորհրդատուն» Իլհամ Ալիեւի գլխավոր ռազմական խորհրդական Վահիդ Ալիեւն է, ինչպես նաեւ՝ Ադրբեջանի ԱԱ նախարարությունը: Նման բարձր հովանավորությունը, բնականաբար, հեղինակին թույլ է տվել «ուսումնասիրել» ահռելի քանակության փաստաթղթեր, որոնց պատճենները տեղադրված են գրքում (տես՝ erevangala500.com):

Փաստաթղթերի հետ աշխատանքը, հարկավ, պահանջում է ե՛ւ բարեխիղճ վերաբերմունք, ե՛ւ, որ ավելի էական է, կարեւորը երկրորդականից առանձնացնելու, համադրելու եւ այդ հիման վրա եզրակացություններ անելու ունակություն: Տասյան Ջալաձեն, բարեբախտաբար, չափազանց անփույթ է գտնվել իրեն տրամադրված, երբեմն «գաղտնի», «միայն մեկ օրինակից» նշագրումով փաստաթղթերի հանդեպ: Բարեբախտաբար ենք ասում, որովհետեւ հակառակ դեպքում մենք կզրկվեինք շատ արժեքավոր մանրամասնություններից:

Այս իմաստով Ջալաձեի գիրքը «հանրագիտարանային» արժեք ունի: Առանց չափազանցության: Մենք մտադիր ենք դրան անդրադառնալ ավելի հանգամանալի հոդվածով: Առայժմ բավարարվենք մի փաստով: 1992թ.-ի հունվարի 29-ին Մութալիբովի նախագահությամբ տեղի է ունենում Ադրբեջանի անվտանգության խորհրդի հերթական նիստը: Քննարկման առարկան «Ղարաբաղի լեռնային մասում տիրող իրավիճակն է»: Բնականաբար, ներկա են ուժային կառույցների ղեկավարները, ՊՆ գլխավոր շտաբի պետը, վարչապետը եւ այլք:

Հասված Մութալիբովի եզրափակիչ խոսքից. «Այսօր մեր մտահոգության գլխավոր առարկան Շուշին է: Հարկ է այնտեղ նետել բոլոր հնարավորությունները: Այնտեղ նետել բոլոր ուժերը: Այնտեղ նետել ողջ (ռազմական) տեխնիկան: Մենք ետ կվերադարձնենք այն գյուղերը, որ կորցնում ենք (Լեռնային Ղարաբաղում): Հարկ է ողջ հանրապետության, ամբողջ ժողովրդի, մեր բոլորի ուշադրությունը ֆոկուսել Շուշիի վրա» (տես՝ նույն տեղում):

Այնուհետեւ նա շանթուկրակ է թափում կառավարության հասցեին: «Ինչո՞ւ նախագահը (ինքը- Վ. Ա.) պետք է զբաղվի ամենաչնչին հարցերով, մենք կառավարություն ունե՞նք: Ունենք, ուրեմն թող զբաղվի /հարցերի լուծմամբ»,- ասում է Մութալիբովը եւ հանկարծ, կարծես «շեղվելով», հարցնում.

- Ի դեպ, ի՞նչ չափով է ավերված Խանքենդին (Ստեփանակերտը- Վ. Ա.)

- Բնակելի ֆոնդի ավելի քան մեկ երրորդ մասով,- պատասխանում է ՆԳ նախարար Քերիմովը:

- Տեղեկություններ կան, որ այնտեղ (Ստեփանակերտում- Վ. Ա.) բնակչությունն էվակուացվել է,- ասում է Մութալիբովը:

- Էվակուացվել է դեպի կենտրոն (քաղաքի- Վ. Ա.),- հաստատում է ՆԳ նախարարը:

- Եկեք դրանով էլ ավարտենք,- բազմանշանակ եզրափակում է Մութալիբովը:

Մութալիբովն, իհարկե, հիմար չէր: Գիտեր, որ նիստի ընթացքը սղագրվում է: Այդուհանդերձ, իրեն թույլ է տվել խոսել Ստեփանակերտում ավերածությունների չափի եւ բնակչության «էվակուացիայի» մասին: Հասկանալի է, որ նման «միջարկություն» նա արել է «բոլոր հնարավորությունները, ուժերը, տեխնիկան Շուշի նետելու հրամայականի» եւ «կորցրած գյուղերը ետ բերելու անխուսափելիության» մասին ասածների համատեքստում:

Դրանով նա փաստորեն հաստատել է, որ Ստեփանակերտի ավերումը պետական նպատակադրվածություն է, այն իրականացվում է Շուշիից: Եվ հանձնարարել է Շուշի նետել բոլոր հնարավորությունները, ուժերը եւ ողջ ռազմական տեխնիկան, որպեսզի Ստեփանակերտի ավերումը շարունակվի ավելի մեծ չափերով: Այդ դեպքում, ըստ Մութալիբովի, «հնարավոր կլինի ետ բերել կորցրած գյուղերը»: Ավելի կոնկրետ՝ եթե «չլինի Ստեփանակերտը, ապա ԼՂ խնդիրը կլուծվի ինքնին»:

Կրկնենք. այս ամենը տեղի է ունեցել 1992-ի հունվարի 29-ին՝ Ադրբեջանի անվտանգության խորհրդի նիստում: Ստեփանակերտում ավերածությունների չափով հետաքրքրվել է նախագահը, պատասխանել է ՆԳ նախարարը: Երկխոսության եզրակացությունը՝ «եկեք դրանով էլ ավարտենք», նշանակում է, որ Մութալիբովը պարզապես չի ցանկացել, որ հետագա խոսակցությունը, որն անկասկած եղել է եւ վերաբերել Շուշիից Ստեփանակերտի ավերումը հետեւողականորեն շարունակելուն, այն ավելի ինտենսիվ դարձնելուն, մտնի նիստի սղագրություն:

Այդքան խելամտություն նա ունեցել է: Իսկ ահա նրան փոխարինելու եկած իշխանությունն այնքան հիմար է, որ նախագահի գլխավոր ռազմական խորհրդատուի եւ ԱԱ նախարարության մակարդակով հնարավորություն է ստեղծել, որպեսզի անհայտ ծագման մի լրագրող շրջանառության մեջ դնի պետական գաղտնիք պարունակող փաստաթղթեր: Էլ ավելի անձեռնհաս է Իլհամ Ալիեւի աշխատակազմի տեղեկատվական ապահովության բաժնի պետ Էլնուր Ասլանովը, որ Ջալաձեի ընդամենը 250 օրինակով տպագրված գիրքը տեղադրել է www.erevangala.com կայքում: Շնորհակալություն դրա համար: Թե չէ որտեղի՞ց կիմանայինք, որ Ստեփանակերտի հետեւողական հրթիռահրետակոծումը ոչ թե մի ինչ-որ «հարբած սպայի», ինչպես գրում են ադրբեջանցի որոշ հեղինակներ, այլ՝ Ադրբեջանի անվտանգության խորհրդի եւ անձամբ Այազ Մութալիբովի ձեռքի գործն էր:

Վ. Ա.

# «Այլընտրանքային ոստիկանություն» Եգիպտոսում



**Եգիպտոսում ոստիկանների գործադուլի հետեւանքով գոյացած «դատարկությունը» սկսել են արագորեն լցնել իսլամիստները: «Ջամաա Իսլամիա» կազմակերպությունը հայտարարել է, որ «այլընտրանքային ոստիկանություն» է կազմավորվում եգիպտական քաղաքներում կարգուկանոնի պահպանության նպատակով:**

**«Ջամաա Իսլամիայի» պարեկները կրում են սպիտակ հագուստ եւ գործում են ճերմակ դրոշների ներքո, հաղորդում է պաղեստինյան «Մաան» գործակալությունը: Այդ պարեկախմբերի մեջ մտնում են երիտասարդական իսլամիստական զանազան շարժումների ներկայացուցիչներ:**

**Գործակալությունը նշում է, որ Եգիպտոսում ամենքը չէ, որ հիացած են փողոցներում իսլամիստական պարեկների ներկայությունից: Ոմանք հիշեցնում են, որ Եգիպտոսի սահմանադրությունն արգելում է նման կազմավորումների ստեղծումը:**

**Ներկայումս ոստիկանների գործադուլը շարունակվում է Կահիրեի, Ալեքսանդրիայի, Գիզայի, Իսմայիլիայի, Պորտ-Սաիդի, Մինիայի, Սուխագի եւ Դակախլիայի մարզերում:**

**Վերջերս Եգիպտոսում ոստիկանական պարտականությունների մասնակի կատարման նպատակով քաղաքացիական կոմիտեների ստեղծումը դարձել է սովորական երեւույթ: Օրինակ, Պորտ-Սաիդում քաղաքացիները ճանապարհային երթեւեկության կարգավորման աշխատանքը իրենց վրա վերցրին այն բանից հետո, երբ ճանապարհային ոստիկանության բոլոր աշխատակիցները լքեցին անկարգությունների ասպարեզ դարձած քաղաքը:**

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՎՏԱՆԳ

# «Իրանը չի կարող «աննկատելիորեն» ռազմական ուրան արտադրել»

*Պնդում են ԱՄՆ հետախուզությունում*



**ԱՄՆ-ին մինչեւ օրս հայտնի չէ, թե Իրանի ղեկավարությունը կիրամայի՞ արդյոք միջուկային զենք ստեղծել, հայտարարել է ԱՄՆ ազգային հետախուզության տնօրեն Ջեյմս Կլեպպերը Սենատի պրոֆիլային հանձնախմբի նիստում:**

**Կլեպպերը նշել է, որ իրանցիները զգալի հաջողությունների են հասել ուրանի հարստացման եւ բալիստիկ հրթիռների մշակումների ոլորտում, ինչպես նաեւ ունեն միջուկային ռեակտորներ: Սա նշանակում է, որ Իրանն արդեն ունի հրթիռների միջուկային մարտագլխիկներ ստեղծելու հնարավորություն, եւ հիմա զենքի արտադրությունը կախված է միայն Իրանի ղեկավարության քաղաքական կամքից:**

**Դրա հետ մեկտեղ ամերիկյան հատուկ ծառայությունները վստահ են, որ իրանական տեխնոլոգիան ներկայումս թույլ չի տալիս «աննկատելիորեն» սկսել ռազմական ուրանի կամ պլուտոնիումի արտադրություն: Կլեպպերի խոսքերը մեջբերում է «Քոլ Իսրայել» ռադիոկայանը:**

**Ինչ վերաբերում է միջազգային պատժամիջոցներին, դրանք վնասել են Իրանի տնտեսությանը, բայց առայժմ երկրի ղեկավարությանը չեն ստիպել փոխելու դիրքորոշումը միջուկային ծրագրի առնչությամբ:**

**Ջեյմս Կլեպպերը նաեւ նշել է, որ ԱՄՆ-ի հետ ռազմական բախումը ձեռնտու չէ Իրանին, քանի որ վարչակարգի գլխավոր նպատակը գոյատեւումն է: Իրանցիների դաշնակից «Հզբոլլահը» ներկայումս ուշադրությունը բեւեռել է իսրայելական օբյեկտներին հարվածելու փորձերի վրա եւ նմանապես խուսափում է Մերձավոր Արեւելքից դուրս ԱՄՆ-ի հետ առճակատումից:**

# Մեծ Բրիտանիան կզինի սիրիացի ապստամբներին



Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Կեմերոնը հայտարարել է, որ իր երկիրը լրջորեն քննության է առնում սիրիացի ապստամբներին զենք առաքելու հնարավորությունը: Լոնդոնի «Գարդիան» թերթը նշում է, որ վարչապետը մտադիր է հասնել Սիրիայի զինամատակարարման վրա Եվրոմիության հաստատած արգելքի վերացմանը:

Ներկայումս գործող բռնարգելքի ժամկետը լրանում է մայիսին: Եթե ԵՄ երկրները միաձայն չերկարաձգեն այն, ապա արգելքը կվերանա: Կեմերոնն ասել է, որ ծայրահեղ դեպքում ինքը կարող է ամենքին հիշեցնել, որ «Մեծ Բրիտանիան դեռեւս անկախ երկիր է» եւ ունի իր արտաքին քաղաքականությունը:

Վարչապետը խոստովանել է, որ զինամատակարարումը որոշ վտանգ է պարունակում, քանի որ Բաշար Ասադի կառավարության դեմ մարտնչում են ոչ միայն չափավորական, այլեւ ծայրահեղական տարրեր, որոնք կապեր ունեն «Ալ Ղաիդայի» հետ: Սակայն նա էլ ավելի վտանգավոր է համարում անգործունեությունը: «Մինչ աշխարհը դիտում էր եւ ոչինչ չէր անում, Սիրիայում սպանվեց 70 հազար մարդ, իսկ ջիհադիստական խմբավորումները սրընթացորեն զորացան եւ զորանում են», ընդգծել է նա:

Այդ պատճառով Կեմերոնը կարծում է, որ միայն չափավորական ընդդիմության հետ աշխատելով, նրան օգնելով հնարավոր կլինի այժմ եւ ապագայում ինչ-որ չափով ազդել Սիրիայի իրավիճակի վրա:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# Ներկայացվում են նախագահական մրցանակի

Հրանտ Կոմիտասյան, Աշոտ Գրիգորյան, Լեւոն Խրիստաֆորյան, Զարուհի Ավետիսյան՝ «ՀՀ կենտրոնական բանկի երրորդ մասնաշենքի ինժեներական ցանցերի արդիականացման եւ ինտերիերի դիզայնի նախագծի մշակում եւ իրականացում» (Ներկայացված է «Հայաստանի դիզայներների միավորում» ՀԿ կողմից)

Արտակ Ղուլյան՝ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի շենքը Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում (Ներկայացված է Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի կողմից)

Լեւոն Աբրահամյան՝«Պլաստիլինե նկարազարդումներ»

Ռուբեն Արուտչյան՝ «Դիմանկարներ «Մենք» նկարաշարից՝ «Գարեգին Նժդեհ», «Շահան Նաթալի», «Սայաթ Նովա» (Ներկայացված է «Աշխարհի հայ նկարիչների միավորում» ՀԿ կողմից)

Հենրիխ Էլիբեկյան՝ «Երկխոսություն կյանքի տեւողությամբ», դիմանկարների շարք (Ներկայացված է Ժամանակակից արվեստի թանգարանի կողմից)

Հակոբ Հակոբյան՝ «Սիրո պարտեզ», գեղանկարների շարք (Ներկայացված է «Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամի կողմից)

Միսակ Մաղաքյան՝«Քարի հոգին» ցուցահանդես-նախագիծ

Արամայիս Մխիթարյան՝ «Հիսուսի երկրորդ գալուստը», գեղանկար

Էդիկ Վարդանյան՝ «Թալին» նկարաշարից. «Երազ», «Իմ կորցրած աշունը», «Տերեւաթափի օր», «Բարի լույս, թալինցիներ», «Ցորեն են չորացնում», «Թալին»

Ազատուհի (Տաթեւ) Մնացականյան՝ «Արվեստի հայ երախտավորների ի մասնավորի նկարիչ քանդակագործների ֆոտոպորտրետների շարք»

Շահեն Խաչատրյան՝ «Ցավի գույնը՝ Եղեռնի անդրադարձը հայ նկարչության մեջ», «Հ. Այվազովսկի», հայ նկարիչներին նվիրված պաստառներ

Սամվել Կարապետյան՝ «Անի-1050», ալբոմ-ուսումնասիրություն (Ներկայացված է «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» հիմնադրամի կողմից)

Հասցե՝ 0019, Երեւան, Մարշալ Բաղրամյան պող., 24 շենք

Աշխատանքային ժամերը՝10:00 -18:00

Մուտքն ազատ է:

*Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակների հովանավոր «Պողոսյան» հիմնադրամ*

# «Վանա ծովուն արշալույսը» ֆիլմի ցուցադրում Չինաստանում

**Մարտի 9-ին Պեկինի լեզվի եւ մշակույթի համալսարանում (BLCU) Չինաստանում անցկացվող ֆրանկոֆոնիայի միջազգային կինոփառատոնի շրջանակներում ՉԺՀ-ում ՀՀ դեսպանության աջակցությամբ տեղի ունեցավ հայ ժամանակակից կինոռեժիսորներ Արտակ Իգիթյանի եւ Վահան Ստեփանյանի «Վանա ծովուն արշալույսը» ֆիլմի ցուցադրումը:**

**Մեծ եղեռնը վերապրած եւ ԱՄՆ ներգաղթած հայ ընտանիքի մասին պատմող այս ֆիլմը դիտեցին Պեկինի տարբեր համալսարանների ուսանողներ, որոնց շարքում էին նաեւ Պեկինում սովորող հայ երիտասարդները: Ֆիլմը ցուցադրվում էր հայերեն լեզվով եւ ուղեկցվում ֆրանսերեն ու չինարեն սուբտիտրերով:**

**Ֆրանկոֆոնիայի կինոփառատոնի շրջանակներում «Վանա ծովուն արշալույսը» ֆիլմը մարտի 10-ին ցուցադրվեց նաեւ Շանհայ քաղաքում:**

# Էրիկ Միրզոյանի համերգը երիտասարդական նվագախմբի հետ

**Այսօր, մարտի 14-ին՝ ժամը 19:00, գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ ՀՊԵՆ հրավերով Արամ Խաչատրյան համերգասրահում երեւանյան հանդիսատեսին կներկայանա Վլադիմիր Սպիվակովի միջազգային բարեգործական հիմնադրամի կրթաթոշակառու, «Չելկունչիկ» պատանի երաժիշտների 13-րդ միջազգային հեռուստատեսային մրցույթի դափնեկիր, կլառնետահար Էրիկ Միրզոյանը:**

**Երեկոյի ընթացքում նվագախումբը եւ պատանի մենակատարը հանդես կգան Սերգեյ Տանեեւի «Կանցոնա կլառնետի եւ լարային նվագախմբի համար» եւ Յոհան Սեբաստիան Բախ/Շառլ Գունոյի «Ավե Մարիա կլառնետի եւ լարային նվագախմբի համար» ստեղծագործությունների համատեղ կատարմամբ:**

**ՀՊԵՆ ծրագրում կներառվեն նաեւ Պ. Սարյանի եւ Դ. Շոստակովիչի ստեղծագործություններից:**

# Ցուցահանդես Գեղարքունիքից

**Երեկ՝ մարտի 13-ին Գեղագիտության ազգային կենտրոնում բացվեց Գեղարքունիքի Ներքին Գետաշենի Կերպարվեստի խմբի սաների ստեղծագործությունների ցուցահանդեսը: Ցուցադրված էին երեխաների մոտ 150 աշխատանքներ, որոնք ներկայացնում են խմբակի վերջին 9 տարվա ստեղծագործական պատկերը: Կերպարվեստի խումբը գործում է արդեն 15 տարի՝ մանկավարժ-նկարիչ Նեկտար Սահակյանի նախաձեռնության շնորհիվ եւ ղեկավարության ներքո: Խմբի սաները բազմաթիվ միջազգային (Եգիպտոս, Ռումինիա, Հնդկաստան, Լեհաստան, Ռուսաստան եւ այլն) ցուցահանդեսների մրցանակակիրներ են եւ մշտապես ակտիվորեն մասնակցել են հանրապետական ցուցահանդեսների:**

**Բացման ու ողջույնի խոսքով հանդես եկավ Գեղագիտության ազգային կենտրոնի տնօրեն Լեւոն Իգիթյանը, որ շնորհավորեց ու բարի երթ մաղթեց երեխաներին ու մի քանի խոսքով ներկայացրեց աշխատանքները: Նա նշեց, որ չնայած դժվար պայմաններին, այնուհանդերձ երեխաները սիրով են վերաբերվում իրենց արվեստին, ավելի լավ ներկայացնելու համար այն թե մեր ու թե օտար երկրներում: Նա նշեց նաեւ ,որ երեխաները չունենալով շենքային պայմաններ՝ պարապմունքներն անցկացնում են իրենց ուսուցչուհու տանը:**

**Այնուհետեւ ելույթ ունեցավ ՀՀ կրթության ու գիտության նախարարության ներկայացուցիչը Ազգային պատկերասրահի Մարտունու մասնաճյուղի տնօրեն Անահիտ Գեւորգյանը:**

**Վերջում խոսեց Նեկտար Սահակյանը՝ ներկայացնելով ցուցահանդեսի ստեղծման պատմությունը,շնորհակալություն հայտնեց բոլոր ներկաներին ու նշեց,որ ցուցահանդեսը նվիրվում է Հենրիկ Իգիթյանի հիշատակին:**

**Ցուցահանդեսը գործելու է մինչեւ մարտի 20-ը:**

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# Աննա Պողոսովայի մենահամերգը

Մարտի 10-ին Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնում կայացավ հայ երգի շնորհալի կատարող, տարբեր մրցույթների եւ փառատոների մասնակից Աննա Պողոսովայի մենահամերգը, որը նվիրված էր Կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին:

Աննա Պողոսովան դեռ մանուկ հասակից աչքի էր ընկնում երգի, պարի եւ երաժշտության նկատմամբ ունեցած հակումներով:



Լեփ-լեցուն դահլիճում հնչեցին հանրահայտ եւ սիրված երգեր ինչպես հայկական, այնպես էլ վրացական եւ արտասահմանյան երգացանկից, դառնալով Աննա Պողոսովայի շնորհավորանքը բոլոր կանանց՝ Մարտի 8-ի կապակցությամբ: Համերգի ժամանակ մենակատարուհու երգն ուղեկցվում էր Վանո Մկրտչյանի դուդուկի եւ Պավել Օգանեզովի՝ դաշնամուրի նվագակցությամբ:

Մենահամերգը համեմված էր նաեւ Թբիլիսիի թիվ 104 դպրոցի աշակերտուհի Լիզա Թորոսյանի գեղեցիկ ասմունքով:

Ավելացնենք, որ 2012 թվականին Աննան մասնակցեց «Իմեդի» հեռուստատեսության «Նուցա սկոլա» նախագծին, հասնելով կիսաեզրափակիչ, իսկ տարեվերջին երիտասարդ երգչուհին դարձավ Երեւանում ամեն տարի անցկացվող «Մենք երգում ենք Առնո Բաբաջանյանի երգերը» երրորդ մրցույթ-փառատոնի հաղթող եւ արժանացավ չորրորդ հանրապետական ուսանողական մրցույթ-փառատոնը բացելու մեծ պատվին:

*Վիրահայոց թեմի մամլո դիվան*

# Ջութակի տոն Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում

Թբիլիսիի Վանո Սարաջիշվիլու անվան պետական կոնսերվատորիայի ջութակի դասարանի պրոֆեսոր Էռնստ Առաքելովի համերգը, որը կայացավ մարտի 2-ին Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահում, հրապուրել էր ոչ միայն լարային երաժշտության բազում երկրպագու-ունկնդիրների, այլեւ ջութակի դասարանի բազմաթիվ ուսուցիչների եւ աշակերտների, քանզի նրանց հնարավորություն էր ընձեռվել վերստին հիանալու մեծ ուսուցչի դասարանի սաների ջութակի կատարողական վարպետությամբ: Ինչպես նշեց երեկոյի վարող, Վրաստանի հայ երաժիշտների միության նախագահ Արտեմ Կիրակոզովը (Գրիգորենց), իսկապես արհեստավարժ ջութակահար դառնալու համար հարկավոր են ոչ միայն բնական տվյալներ, այլեւ ինտենսիվ մշտական պարապմունքներ, համապատասխան փորձ ունեցող արհեստավարժ ուսուցիչների ղեկավարությամբ: Այդ պատճառով էլ վերոհիշյալ համերգը դարձավ նաեւ յուրատեսակ վարպետության դաս:



Բարձր վարպետությամբ կատարվեցին լարային երաժշտության համաշխարհային հանճարների երգացանկից տարբեր ստեղծագործություններ: Համերգի վարողներ Արտեմ Կիրակոզովը եւ Վերոնիկա Իաշվիլի-Մանուկյանը յուրաքանչյուր նոր համար մատուցում էին ճանաչողական համառոտ մեկնաբանությամբ, ինչը համերգին հաղորդեց նաեւ որոշակի ճանաչողական բնույթ: Ջութակահարների հաջող ելույթներին նպաստեց նաեւ դաշնակահարուհիներ Թեոնա Միքելաձեի եւ Իրինա Պլատոնովայի նվագակցությունը:

Երեկոյի ընթացքում հնչեցին Մոցարտի, Պագանինիի, Վաժա Ազարաշվիլու, Սարգիս Բարխուդարյանի, Վիլյամ Կրոլլի, Հենրիխ Էռնստի, Սարասատեի ստեղծագործությունները, որոնք փայլուն կատարեցին Ե. Միքելաձեի անվան երաժշտական գիմնազիայի, Վանո Սարաջիշվիլու անվան պետական կոնսերվատորիայի, մագիստրատուրայի սովորողները: Առանձնահատուկ ընդունելության արժանացավ Ե. Միքելաձեի անվան երաժշտական քոլեջի աշակերտուհի, ծնունդով Հարավային Կորեայից Միխե Ջանգի ելույթը, ով մեծ վարպետությամբ կատարեց Կոմիտասի «Կռունկը»: Շնորհալի ջութակահարուհու կատարողական արվեստը վարպետորեն հղկվում է մաէստրո Է. Առաքելովի կողմից:

Վերջում իր օրհնության խոսքում Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանը առանձնահատուկ ընդգծեց համամարդկային բարձր զգացմունքների անսահմանությունը, որ այնպես գեղեցիկ դրսեւորվեց տարբեր ազգի նվիրյալների ելույթներում: Ուրախալի է, որ «Հայարտունը» որպես Վրաստանի մշակութային կենտրոններից մեկը, բաց եւ հյուրընկալ է ոչ միայն Վրաստանի բազմազգ ժողովրդի, այլեւ նրա սահմաններից դուրս ծնվածների համար, հավելեց Սրբազան հայրը:

Համերգին ներկա գտնվող Վրաստանի մշակույթի նախարարության միջազգային ծրագրերի դեպարտամենտի փոխտնօրեն Խաթունա Խունդաձեն եւ Թբիլիսիի Վ.Սարաջիշվիլու անվան կոնսերվատորիայի պատմության թանգարանի տնօրեն Մարինա Ջիխլաձեն նշեցին, որ մեծահարուստ Գալուստ Գյուլբենկյանի անունը կրող դահլիճը իրավամբ ծառայում է մարդկային հարաբերություններում բարձր մշակույթի լեզվով բարին, ջերմությունը եւ սրտակցությունը բազմապատկելու իր առաքելությանը եւ այս երեկոն իրավամբ դարձավ դրա վկայությունը:

Հավելյալ տեղեկատվությունը հասանելի է նաեւ https://www.facebook.com/media/set/?set=a.341704339279718.1073741828.113192792130875 հասցեով:

*Վիրահայոց թեմի մամլո դիվան*

# Արարման բերկրանքի բույրը

47-ամյա **Սիլվա Հակոբյանը** մասնագիտությամբ ճարտարագետ է, բայց իրեն ավելի շատ նկարիչ է համարում: Աշխատում է բոլորիս հայտնի Վերնիսաժում: Հաճախորդների համար դիմանկարներ է նկարում: Թեեւ այս աշխատանքի միջոցով շատ փող վաստակել չի կարողանում, բայց, ինչպես ինքն է ասում, իր համար «նկարելուց լավ գործ չկա աշխարհում»

- Փոքր էի, երբ սկսեցի նկարել: Առանց նկարելու ես ապրել չեմ կարող: Իմ դիմանկարներն իմ հարստությունն են: Իմ վրձինն իմ լեզուն է:

- Առավելապես դիմանկարների պատվերներ եմ ունենում: 2500 դրամ արժե իմ մեկ դիմանկարը: Թանկ գին ասեմ՝ պատվերներ հաստատ չեմ ունենա,- անկեղծանում է նկարչուհին: - Հիմա չեմ գանգատվում. բավական շատ հաճախորդներ ունեմ: Կան հաճախորդներ, ովքեր ցանկանում են տարբեր դիրքերով մի քանի նկար ունենալ: Հաճախորդուհիներիցս մեկը, օրինակ, արդեն երեք դիմանկար ունի: Մի նկարում գնչուհու կերպարով է, մեկում՝ տխուր, մյուսում՝ լիաթոք ժպտում է: Ինձ համար էլ են հետաքրքրական այդպիսի աշխատանքները:

Զրույցի ժամանակ նկատեցի, որ զրուցակցիս նկարներից մի քանիսի հերոսները մերկ կանայք են: Մի նկարում էլ կիսամերկ կինը տանն էր: Նրա առջեւ դրված էին կուժ, ափսե: Անմիջապես տիկին Սիլվային խնդրեցի մեկնել այդ նկարի իմաստը:

- Այս նկարով ցանկացել եմ ցույց տալ, որ հաճախ գեղեցկությունը թաքնված է մեր կողքին՝ խրված կենցաղային հոգսերի մեջ, եւ նրա գեղեցկությունը նկատող չկա:

Ակամա հիշեցի Ակ. Բակունցի «Ալպիական մանուշակը»...

Հետաքրքրական է, բայց Սիլվա Հակոբյանը նշում է, որ բնորդուհի չունի.

- Իմ բնորդուհին իմ միտքն է: Իհարկե, լավ կլիներ, որ բնորդուհի ունենայի: Բայց, ցավոք, դա թանկ հաճույք է: Պատահել է, որ իմ ընկերներից ոմանք իմ բնորդներն են եղել: Բայց վճարովի բնորդ չեմ ունեցել: Կուզենայի նշել, որ երբ կա բնորդ, արարման բերկրանքն ավելի կրքոտ է լինում, քանի որ զգում եմ, որ հասել եմ նպատակիս: Հասկանում եմ, որ բնորդուհին ու նկարիս հերոսուհին նույն էակն են: Գերագույն հաճույք եմ զգում, երբ կարողանում եմ Աստծո ստեղծած արարածին վերակերտել իմ աչքերով, իմ ձեռքով:

Վերջում նկարչուհին ի մի է բերում մտքերն ու փորձում բացատրել, թե իր համար ինչ է նշանակում նկարել:

- Արարման բերկրանքն իսկապես խենթացնող զգացում է: Նկարել, ինձ համար նշանակում է ապրել, շնչել, զգալ, տենչալ, կարոտել, ձուլվել քո «ես»-ին: Նկարել, նշանակում է զգալ կյանքի համն ու բույրը եւ վերջապես... տրվել կյանքին:

Նյութը պատրաստեց
ՀԱՍՄԻԿ ԲԱԼԵՅԱՆԸ

# «Միկան» ու «Շիրակն» էլ կշարունակեն պայքարը գավաթի համար

Ֆուտբոլի Հայաստանի գավաթի խաղարկությունում հայտնի դարձան կիսաեզրափակիչի բոլոր մասնակիցները: «Փյունիկին» եւ «Գանձասարին» միացան «Միկան» ու «Շիրակը», որոնք կշարունակեն պայքարը պատվավոր մրցանակի համար:




Գործող գավաթակիր «Շիրակն» Իջեւանում կայացած առաջին խաղում 1-0 հաշվով հաղթել էր «Արարատին»: Աբովյանում կայացած պատասխան խաղում թիմի գլխավոր մարզիչ Վարդան Բիչախչյանը պահեստայինների նստարանին էր թողել փորձառու ֆուտբոլիստներ Անդրանիկ Բարիկյանին, Տիգրան Դավթյանին եւ Լեւոն Փաչաջյանին, իսկ Կարեն Ալեքսանյանն ընդհանրապես բացակայում էր հայտացուցակից:

Խաղը հարուստ չէր գոլային պահերով: Առաջինը կարող էր հաջողության հասնել «Շիրակը», սակայն Մայիս Ազիզյանի դեմ մենմենակ հայտնված Դավիթ Հակոբյանը վրիպեց: «Արարատն» էլ ունեցավ դարպասը գրավելու համար պահ, սակայն Գալուստ Պետրոսյանի հարվածից հետո «Շիրակի» դարպասապահ Արթուր Հարությունյանը հաջող խաղաց: Ընդմիջումից հետո էլ շիրակցի Դիդիե Բորիսը փորձեց գլխի հարվածով խոցել դարպասը, սակայն Մայիս Ազիզյանն իր տեղում էր: Այդպես էլ դարպասի գրավում չարձանագրվեց, ինչը ձեռնտու էր «Շիրակին»:

Առաջին արգելքը հաջողությամբ հաղթահարեց 6-ակի գավաթակիր «Միկան», որը սեփական հարկի տակ հյուրընկալել էր «Ուլիսին»: Մրցակիցների առաջին խաղում դարպասները մնացել էին անառիկ: Այնպես որ ամեն ինչ վճռվելու էր պատասխան խաղում:

Արդեն 11-րդ րոպեին «Ուլիսը» կարող էր բացել հաշիվը, երբ Պատոն մենմենակ դուրս եկավ դարպասապահի դիմաց: Սակայն Արմեն Ֆիշյանը փրկեց «Միկային»: Իսկ առաջին խաղակեսի վերջում ուլիսցի Շոթա Ջիքիայի հարվածից հետո գնդակը դիպավ դարպասաձողին:

Դեռ նոր էր սկսել 2-րդ խաղակեսը, երբ Արսեն Բալաբեկյանը կորցրեց «Ուլիսին» առաջ մղելու եւս մեկ հնարավորությունը: Իսկ ահա «Միկան» ավելի հաջողակ գտնվեց: 54-րդ րոպեին տուգանային հարվածը հիանալի իրացրեց թիմի ավագ Աղվան Մկրտչյանը՝ բացելով հաշիվը: Իսկ խաղավարտից 8 րոպե առաջ Աղվանը եւս մեկ անգամ գրավեց «Ուլիսի» դարպասը՝ ապահովելով թիմի հաղթանակը:

Եվ այսպես, գավաթի համար պայքարը սկսած 9 թիմերից ասպարեզում մնացին 4-ը: Կիսաեզրափակիչում զույգեր են կազմել «Շիրակն» ու «Միկան», «Փյունիկն» ու «Գանձասարը»: Հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Շիրակի» եւ «Միկայի» մրցավեճը, որոնք առաջնությունում էլ պայքարում են չեմպիոնի տիտղոսի համար: Մրցակիցներն արդեն 3-րդ տարին անընդմեջ մրցելու են գավաթի մրցաշարում: 2011-ին «Շիրակն» ու «Միկան» հանդիպել էին գավաթի եզրափակչում: 4-1 հաշվով խաղը շահել էր «Միկան»՝ 6-րդ անգամ նվաճելով գավաթը: Անցյալ տարի կիսաեզրափակիչում հաջողությունն ուղեկցել էր «Շիրակին», որը մտնելով եզրափակիչ, նվաճել էր գավաթը՝ 1-0 հաշվով պարտության մատնելով «Իմպուլսին»:

# «Բարսելոնը» գերազանց լուծեց իր առջեւ դրված խնդիրը



Չեմպիոնների լիգայի մրցաշարում ֆուտբոլասերներն անհամբերությամբ էին սպասում «Բարսելոնի» եւ «Միլանի» պատասխան հանդիպմանը: Մրցակիցների առաջին խաղում «Միլանը» սեփական հարկի տակ 2-0 հաշվով պարտության էր մատնել «Բարսելոնին» եւ հաջորդ փուլ դուրս գալու լավ հնարավորություններ ուներ: Շատերին էր հետաքրքրում, թե արդյոք կհաջողվի՞ իսպանական ակումբին ռեւանշի հասնել եւ քառորդ եզրափակիչի ուղեգիր նվաճել:

«Բարսելոնը» հիանալի լուծեց իր առջեւ ծառացած դժվարին խնդիրը: Դեռեւս 1-ին խաղակեսում Լիոնել Մեսին վերականգնեց 2 խաղերի արդյունքով հավասարակշռությունը՝ ստիպելով «Միլանին» 2 անգամ խաղը վերսկսելու կենտրոնից: Արգենտինացի ֆուտբոլիստը չեմպիոնների լիգայի ընթացիկ մրցաշարում իր գոլերի թիվը հասցրեց 7-ի եւ միայն մեկ գնդակով է զիջում լավագույն ռմբարկուներ Քրիշտիանու Ռոնալդուին ու Բուրակ Յիլմազին: Իսկ չեմպիոնների լիգայի մրցաշարերում խփած ընդհանուր գոլերի քանակով (58) Մեսին շրջանցեց հոլանդացի Ռուդ վան Նիստելռոյին: Այժմ Մեսին զիջում է միայն հանրահայտ Ռաուլին, որը 71 գոլի հեղինակ է:

2-րդ խաղակեսում «Բարսելոնը» վերջնականապես ջախջախեց «Միլանին» Դավիդ Վիլյայի եւ Խորդի Ալբայի խփած գոլերի շնորհիվ: Չեմպիոնների լիգայի մրցաշարում «Բարսելոնը» դարձավ 1-ին ակումբը, որին հաջողվեց փլեյ-օֆում 0-2 հաշվով պարտվելուց հետո ռեւանշի հասնել ու մտնել հաջորդ փուլ:

Թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Խորդի Ռոուրա** («Բարսելոնի» գլխավոր մարզչի օգնական)-Այսօր աներեւակայելի խաղ էր: Առաջին հանդիպումից հետո մեր վիճակը շատ ծանր էր: Սակայն մեր ֆուտբոլիստները կրկին ցուցադրեցին իրենց ողջ ունակությունները: Նրանք աներեւակայելի աշխատասիրություն եւ անձնազոհություն դրսեւորեցին: Հպարտանում եմ թիմով: Հենց խաղասկզբից մենք վճռականորեն էինք տրամադրված: Ճիշտ է, մեր բախտը բերեց, որ «Միլանի» վտանգավոր գրոհից հետո գնդակը դիպավ դարպասաձողին:

Մեր երկրպագուները ջերմորեն աջակցում էին թիմին եւ իրենց մեծ ներդրումն ունեն այս հաջողությունում: Վերջին շրջանում թիմի հասցեին քննադատությունը շատ էր: Ուստի պետք է կրկնակի հպարտանանք ֆուտբոլիստներով, որոնք իրենց լավագույն կողմերով դրսեւորեցին: Նույնիսկ եթե հաջորդ փուլ չմտնեինք, կհպարտանայի թիմով եւ ցույց տված խաղի մակարդակով: Մենք շփվել ենք թիմի գլխավոր մարզիչ Տիտո Վիլանովայի հետ: Նա ապաքինվում է եւ մարտի 25-ին կվերադառնա Իսպանիա:

**Մասիմիլիանո Ալեգրի** («Միլան»)-Առաջին 30 րոպեներին «Բարսելոնը» ֆանտաստիկ ֆուտբոլ ցուցադրեց: Դաշտի տերերը շատ հաջող մամլիչ գործողություններին էին դիմել՝ դժվարացնելով առաջ գնալու մեր խնդիրը: Մրցակիցը 4 գոլերից 3-ը խփեց մեր կողմից սխալներից հետո, որոնք արտահայտվեցին գնդակի կորստով: Մենք կարող էինք հաշիվը հավասարեցնել առաջին խաղակեսում: Փոխարենը քիչ անց 2-րդ գնդակն ընդունեցինք սեփական դարպասը:

Իհարկե, հիասթափված ենք, որ չհաջողվեց երազանքն իրականացնել: «Բարսելոնի» կազմում Մեսիի եւ Ինիեստայի նման բարձրակարգ ֆուտբոլիստներ են խաղում, որոնք կարող են հեշտությամբ շրջանցել ցանկացած պաշտպանի: Սաներիս կշտամբելու առիթ չունեմ, քանի որ մինչեւ վերջին րոպեն նրանք պայքարեցին:

Մեծ անակնկալ մատուցեց թուրքական «Գալաթասարայը»՝ հյուրընկալվելիս 3-2 հաշվով պարտության մատնելով գերմանական «Շալկե-04-ին»: Ընդ որում հաղթական գնդակը թուրքերը խփեցին ավելացված ժամանակի 5-րդ րոպեին: Թեեւ առանց այդ գոլի էլ նրանք հաջորդ փուլ կմտնեին, քանի որ առաջին խաղում գրանցվել էր 1-1 հաշիվ:

Մարզիչների կարծիքն այսպիսին է:

**Ենս Կելլեր** («Շալկե-04»)-Մեր ֆուտբոլիստներն առաջին խաղակեսում իրենց հնարավորություններից 10 տոկոսով ցածր հանդես եկան: 2-րդ խաղակեսում ավելի լավ խաղացինք, սակայն դրական արդյունք ապահովել չհաջողվեց:

**Ֆաթիհ Թերիմ** («Գալաթասարայ»)-Մենք 8 ուժեղագույն թիմերի շարքում ենք, որի առթիվ թուրք ֆուտբոլասերները կարող են մեզ շնորհավորել: Այսօր բոլոր ֆուտբոլիստներն էլ իրենց լավ դրսեւորեցին: Առաջին խաղակեսում մեր թիմը հոյակապ խաղաց: Իսկ մինչեւ առաջին բաց թողած գոլը գոլային 3 պահ չիրացրինք:

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

# «Հյուրիեթն» անդրադարձել է Յուրա Մովսիսյանին

Գրոզնու «Թերեքի» դեմ Յուրա Մովսիսյանի գերարդյունավետ խաղն արժանացել է նաեւ թուրքական «Հյուրիեթի» ուշադրությանը: Թերթը հայ ֆուտբոլիստի մասին մասնավորապես գրել է. «Մովսիսյանն այն անձանցից է, որը կարող է դառնալ Մոսկվայի «Սպարտակի» եւ եվրոպական ֆուտբոլի ծագող «աստղը»: Հետագա հանդիպումներում էլ նման կերպ գործելու դեպքում Մովսիսյանը «Սպարտակի» հիմնական կազմից կարող է դուրս թողնել Էմանուել Էմենիկեին»:

«Հյուրիեթը» ներկայացրել է Յուրա Մովսիսյանի կենսագրությունը, անդրադարձել է նրա ֆուտբոլային կարիերային:

# Ըմբիշները որոշեցին ուժեղագույններին

136 ըմբիշներ վիճարկեցին Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի երիտասարդական առաջնության պարգեւները: Քաշային 8 կարգերում իրենց լավագույնս դրսեւորեցին ու հանրապետության չեմպիոնի տիտղոսին արժանացան Խորեն Թեմուրյանը (50 կգ), Արտակ Հովհաննիսյանը (55 կգ), Աշոտ Վելիցյանը (60 կգ), Արմեն Ալեքյանը (66 կգ), Գեւորգ Համբարձումյանը (74 կգ), Շամիր Աթայանը (84 կգ), Ռազմիկ Պողոսյանն (96 կգ) ու Համլետ Աբրահամյանը (գերծանր քաշ):

# Հայաստանը կներկայացնեն 14 շախմատիստներ

Մայիսի 5-16-ը Լեհաստանի Լեգնիցա քաղաքում կայանալիք շախմատի Եվրոպայի անհատական առաջնությունում Հայաստանը կներկայացնեն 14 շախմատիստներ: Armchess.am-ի տեղեկացմամբ, Եվրոպայի առաջնության պարգեւները կվիճարկեն գրոսմայստերներ Վլադիմիր Հակոբյանը, Սերգեյ Մովսիսյանը, Գաբրիել Սարգսյանը, Տիգրան Պետրոսյանը, Հրանտ Մելքումյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Արման Փաշիկյանը, Ավետիք Գրիգորյանը, Զավեն Անդրեասյանը, Էլինա Դանիելյանը, Հովհաննես Գաբուզյանը, միջազգային վարպետ Կարեն Հ. Գրիգորյանը, ՖԻԴԵ-ի վարպետ Ռոբերտ Աղասարյանն ու Վլադիմիր Պողոսյանը:

# Մեդալ նվաճել չհաջողվեց

Խորվաթիայի մայրաքաղաք Զագրեբում անցկացված ձյուդոյի պատանիների Եվրոպայի գավաթի խաղարկության առաջին փուլում Հայաստանը ներկայացրած 4 ձյուդոյիստներից ոչ մեկին չհաջողվեց մրցանակակիր դառնալ: Առավել հաջող ելույթ ունեցավ 55 կգ քաշային Շահեն Աբաղյանը, որը տոնեց 4 հաղթանակ, կրեց 2 պարտություն ու զբաղեցրեց 5-րդ տեղը:

Քաշային նույն կարգում հանդես եկած Հարություն Դերմիշյանը տոնեց 3 հաղթանակ, կրեց 2 պարտություն ու գրավեց 9-րդ տեղը: 66 կգ քաշային Կամո Օհանյանը տոնեց 2 հաղթանակ, 2 գոտեմարտում պարտվեց ու դուրս մնաց պայքարից: Իսկ Ավետիք Գրիգորյանը (73 կգ) պարտվեց առաջին գոտեմարտում:

Եվրոպայի գավաթի խաղարկության 2-րդ փուլի մրցումները տեղի կունենան մարտի 15-17-ը Թուրքիայի Անթալիա քաղաքում:

# Քաթարցի շեյխերը ֆուտբոլային նոր մրցաշար են կազմակերպում



Քաթարի թագավորական ընտանիքը մտադիր է «Երազանքների ֆուտբոլային լիգա» անվանումով մրցաշար կազմակերպել աշխարհի ուժեղագույն 16 ակումբների մասնակցությամբ: Եվս 8 թիմերի նախատեսվում է հրավիրել կոնկրետ մրցաշարին մասնակցելու: Նախատեսվում է մրցաշարի առաջին խաղարկությունն անցկացնել 2015-ին: Հետագայում դրանք կկազմակերպվեն ոչ զույգ տարիներին, որպեսզի մրցաշարերը չհամընկնեն աշխարհի կամ Եվրոպայի առաջնությունների հետ:

Արդեն ապրիլին նախատեսված է մրցաշարի նախագծի շնորհանդեսը: Մրցաշարի հանդիպումները նախատեսվում է անցկացնել Պարսից ծոցի երկրների 6 քաղաքներում:

Քաթարցի շեյխերը մտադիր են ակումբներին գայթակղել իրենց աստղաբաշխական գումարներով: Միայն մրցաշարի մասնակցության համար թիմերից յուրաքանչյուրը կստանա 175 մլն ֆունտ ստեռլինգ: Համեմատության համար նշենք, որ Լոնդոնի «Չելսին» չեմպիոնների լիգայի գավաթը շահելու համար 47,3 մլն ֆունտ ստեռլինգ էր ստացել: Այնպես որ նոր մրցաշարը կարող է այլընտրանք դառնալ չեմպիոնների լիգային:

Ըստ բրիտանական լրատվամիջոցների, անգլիական 6 ուժեղագույն ակումբներից («Մանչեսթր Յունայթեդ», «Մանչեսթր Սիթի», «Չելսի», «Արսենալ», «Լիվերպուլ», «Տոտենհեմ») 4-ը մշտական տեղ կունենան նոր մրցաշարում; Մասնակցության հարցում ոչ մի խնդիր չի ունենա ՊՍԺ-ն, որի սեփականատերը Qatar Sports Investments ընկերությունն է: Իսպանական «Բարսելոնն» էլ քաթարցի հովանավորներ ունի:

# «Ուրարտուն» մարզվում է Բելառուսում

«Ուրարտու» նորաստեղծ ֆուտբոլային ակումբը սկսել է ուսումնամարզական հավաքը Բելառուսում, որտեղ պետք է մասնակցեր այդ երկրի 1-ին խմբի թիմերի մասնակցությամբ անցկացվելիք մրցաշարին: Սակայն մրցաշարը չեղյալ համարվեց: Ուստի «Ուրարտուն» ստուգողական խաղ անցկացրեց Մինսկի ֆուտբոլային միության սիրողական թիմի հետ: Խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

## Օրվա հետքերով

# Հայկական «մախի»-ավելի՞զմ

### *Հայերը կամ բանաստեղծ են, կամ արտաքին գործերի նախարար*

Պիտի գրեի՝ «Հայկական մաքսիմալի՞զմ, թե՞ մաքիավելիզմ», որոշեցի «նորաբանություն» ստեղծել: Մեկ է՝ մամուլի լեզվին ուշադրություն դարձնող չկա: Հուսամ՝ կներվեմ: Հայերեն ասած՝ ինձ կներեն:

Այժմ՝ ըստ էության:

Հայկական մասս-մեդիան «թեթեւ ձեռքով» տարածեց վարկած, որ Ստեփանակերտի օդանավակայանում հնարավոր է, որ «ռուսական դեսանտ իջնի»: Ինչո՞ւ պիտի ռուսական դեսանտ «ժամանի» ԼՂ, ի՞նչ խնդիր կարող է «դեսանտը լուծել»՝ այս հարցերը մնացին անպատասխան: Այդպես էլ պիտի լիներ: Մասս-մեդիայի «տեղեկացվածության» աղբյուրը Երեւանում մի որեւէ երկրի դեսպանատունն էր: Լավագույն դեպքում: Բացառված չէ նաեւ «մատ ծծելու» տարբերակը: Փառք Աստծո, ռուսաստանցի զինվորականը մինչ այդ ՀԱՊԿ շրջանակներում դեսանտ իջեցնելու մասին ինչ-որ բան ասել էր:

Եվ ահա՝ «սկսվել- գնում է»: Այնպես ու այնքան, որ Միլլի մեջլիսի (Ադրբեջանի) պատգամավոր Ռասիմ Մուսաբեկովը, վկայակոչելով հայկական մասս-մեդիան, լրջագույն տեսքով կարծիք է հայտնում, որ Սերժ Սարգսյանը Մոսկվա է մեկնում ««Խոջալուի» (չակերտները մերն են- Վ. Ա.) օդանավակայանի հարցում Պուտինից թույլտվություն ստանալու»:

Կեցցե՛ն, մեր «քաջարի» մեկնաբան/ուհի/ները, որ կարողանում են ադրբեջանցիներին «այդքան անհանգստություն պատճառել»: Ուրիշ էլ ի՞նչ առիթ պիտի լիներ մտասանջությունների մատնելու ոչ ավել, ոչ պակաս՝ հարեւան երկրի խորհրդարանի արտաքին հարցերով կոմիտեի անդամին, որը իշխող վարչախմբի պարզ խոսափողն է՝ «քաղաքագետի փաթեթավորումով»:

Ուշագրավ է, որ Ստեփանակերտի օդանավակայանը որպես «ռազմական ենթակառուցվածքի բաղադրիչ» ներկայացնելու հեղինակային իրավունքը պատկանում է Ադրբեջանի ԱԳ փոխնախարար, ղարաբաղյան կարգավորման գործընթացում Իլհամ Ալիեւի անձնական ներկայացուցիչ Արազ Ազիմովին: Ստացվում է, որ ադրբեջանական կողմը, թեկուզեւ միջնորդավորված, բայց այնուամենայնիվ, ուղղորդում է հայկական մասս-մեդիայի մի որոշակի հատվածի «խմբագրական քաղաքականությո՞ւնը»:

Կամ այդպես է, կամ հեղինակային իրավունքը չի պատկանում Ազիմովին, եւ նա ու հայկական մասս-մեդիայի նշյալ հատվածը ուղղորդվում են մեկ կենտրոնից: Սա արդեն էական չէ: Գլխավորն այն է, որ Ազիմովը եւ մեր «խորադիտակ» լրագրող/ուհի/-ները Ստեփանակերտի օդանավակայանի «բուն նշանակության մասին» նույն բանն են ասում, որ դա «քաղաքացիական չէ, այլ ռազմական ենթակառուցվածքի բաղադրամաս է»:

Բանը այնտեղ է հասել, որ մեկնաբաններից մեկը տեսլական է շրջանառել, որ «չարժե Հայաստանի եւ Արցախի ինքնիշխանության կորստի գնով գործարկել Ստեփանակերտի օդանավակայանը», երբ խնդրի տեղեկատվական հոսքերում գերիշխողը օդանավակայանի «կարգավիճակայնության» բանավեճն է:

Ընդունելի է, որ Հայաստանի ընտրության հարցում տարբեր կարող են լինել քաղաքական ուժերի, հանրային խմբերի մոտեցումները: Ղարաբաղցին ասում է՝ «մեկը տերտերին է սիրում, մյուսն՝ իրիցկնկանը»: Բայց կարելի՞ է խնդիրը մասնավորեցնել այնքան, որ Ստեփանակերտի օդանավակայանի հարցում վերաբերմունք արտահայտելու «հրավեր հղվի» արդեն Իրանին էլ:

Ժամանակ առաջ նման «խաղեր տալը» դեռ հնարավոր էր դիտել իբրեւ բնորոշ մաքսիմալիզմի դրսեւորումներ: Վարդգես Պետրոսյանը ասում էր. «Երեք հայից մեկը բանաստեղծ է, երկուսը՝ արտաքին գործերի մինիստր»: Այսինքն, կարելի էր ասել, որ լրագրող/ուհի/ներն էլ իրենց արտաքին գործերի նախարար են կարծում, ուզում են ինքնադրսեւորվել:

Բայց վերջին շրջանի՝ Արազ Ազիմովի եւ ադրբեջանցի այլ պաշտոնյաների ու հայկական մասս-մեդիայի մի հատվածի խոսքի ունիսոնը մղում է այստեղ մաքիավելիզմ տեսնելու մտահոգության: Անկախ այն բանից՝ դա հայկակա՞ն է, թե՞ «մասոնական»: Մեր տարածաշրջանին, աշխարհին առհասարակ ավելի լավ ժամանակներ չեն սպասում: Եվ վատ, վտանգավոր է, երբ «պակասը լրացնելու» նախաձեռնությունը գալիս է արդեն «տնից»:

Վերնագրի հարցականն արդարացնելու համար.

Հանուն վաղվա ճշմարտության թող որ լինեմ այսօր սխալ: (Պ. Սեւակ)

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Շնաձկանը հաղթած բրիտանացուն հեռացրին աշխատանքից



Ավստրալիայի լողափերից մեկի մոտ շնաձկանը հաղթած բրիտանացի զբոսաշրջիկ Փոլ Մարշալսին տուն վերադառնալուց հետո հեռացվել է աշխատանքից: Այս միջադեպի մասին տեղեկացնող Ֆրանսպրեսը նշում է որոշ մանրամասնություններ:

Պարզվում է, որ Ավստրալիա մեկնելուց առաջ բրիտանացին բուժման նպատակով արձակուրդ էր վերցրել բարեգործական կազմակերպությունից, որտեղ նա աշխատում էր: Սակայն կազմակերպության աշխատակիցները շատ զարմացել էին, երբ ԶԼՄ-ներում տեսել էին Ավստրալիայում շնաձկանը հաղթած իրենց «հիվանդ» գործընկերոջը: Կազմակերպությունը Մարշալսիին փոստով ծանուցել էր նրա ազատման մասին:

62-ամյա բրիտանացին այս կապակցությամբ արտահայտել է իր դժգոհությունը: «Մեր քաղաքում այնքան էլ շատ գործ չկա շնաձկների դեմ պայքարողների համար», ասել է Մարշալսին, որը կնոջ եւ երեք զավակների հետ ապրում է Մերտիր-Թիդվիլ փոքր բնակավայրում: Նա ակնկալում էր, որ բարեգործական կազմակերպությունը (որն օգնում է երեխաներին), ընդհակառակը, շնորհակալություն կհայտնի իր խիզախ արարքի համար, քանի որ ինքը շնաձկան հարձակումից փրկել է լողափի երեխաներին:

Ավստրալիայում հերոսացված բրիտանացին պարզաբանել է, որ ինքն արձակուրդ էր վերցրել սթրեսի պատճառով. բժիշկը խորհուրդ էր տվել ընտանյոք մի քանի օր անցկացնել ծովափին:

Մարշալսին Ավստրալիայում էր հունվարի վերջերին: Անզեն բրիտանացին լողափի մոտ հայտնված շնաձկանը հեռացրել էր նրա պոչից քաշելով, իսկ հետո գիշատիչն ինքն էր հեռացել: Փրկարարը չէր տուժել, թեեւ շնաձուկը փորձել էր կծել նրա ոտքը: «Սքայ նյուզ» հեռուստաալիքին տված հարցազրույցում Մարշալսին ասել է, որ շնաձկան հայտնվելու հավանական պատճառը եղել է կամ հիվանդությունը, կամ էլ սաստիկ քաղցը:

ԿԱԼԻՖՈՌՆԻԱ

# «Հայաստանը հնագույն քարտեզներում»

«Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի փոխանցմամբ՝ հունվարի 25-ին Շերման Օուքսի (Կալիֆոռնիա) Մերդինյան մատուռի դահլիճում տեղի է ունեցել քարտեզագիր Ռուբեն Գալչյանի դասախոսությունը «Հայաստանը միջազգային եւ հայկական քարտեզներում» թեմայով: Նա խոսել է այն մասին, թե ինչպես են հույն, հռոմեացի, իսլամ եւ արեւմտյան երկրների պատմաբանները, աշխարհագետներն ու քարտեզագետները տեսել եւ ներկայացրել Հայաստանը իրենց նկարագրություններում եւ քարտեզներում: Այդ նկարագրություններն ու քարտեզները մաս են կազմում համաշխարհային քարտեզագրության եւ աշխարհագրական ժառանգության, եւ դրանց բնագրերը պահվում են աշխարհի ճանաչված գրադարաններում եւ թանգարաններում, ինչպես օրինակ՝ Մ.



Նահանգների Կոնգրեսի գրադարանը, Ֆրանսիայի ազգային գրադարանն ու Բրիտանական գրադարանը: Նաեւ Բեռլինի, Բոլոնիայի, Ստամբուլի, Հայաստանի եւ այլ երկրների գրադարաններում: Այդ քարտեզները ապացուցում են, որ տարածաշրջանում եւ Միջին Արեւելքում գտնվող երկրներից միայն երկուսն ունեն ավելի քան երկու հազար տարվա պատմություն, մեկը Հայաստանն է, մյուսը՝ Պարսկաստանը:

«Հայաստանը գոյություն է ունեցել մ. թ. ա. 600 տարի առաջ: Այն շրջանները, որտեղ ապրել են հայերը, կոչվել են Հայաստան: Ադրբեջանի Հանրապետության տարածաշրջանը երբեք չի կոչվել Ադրբեջան: Այն կոչվել է Ատրպատական (Ատրոպատեն), եւ ժամանակ առ ժամանակ փոխելով անունը (Աղվանք, Դերբենդ, Շիրվան, Թալիշ եւ այլն), ստացել է ներկայիս անունը», համոզված է Գալչյանը, որ ծնվել է Թավրիզում (Իրան), Մեծ եղեռնից փախած գաղթականների ընտանիքում, որոնք Թավրիզ են հասել Հայաստանի, Վրաստանի եւ Ֆրանսիայի ճանապարհով: Թեհրանում դպրոցն ավարտելուց հետո Գալչյանը կրթաթոշակ է ստացել սովորելու Բրիտանիայում՝ Բիրմինգհեմ քաղաքի Աստոն համալսարանում, որտեղ ուսանել է ճարտարագիտություն: Սակայն փոքր տարիքից հետաքրքրված է եղել աշխարհագրությամբ եւ քարտեզագրությամբ: Այդ հետաքրքրությունը իր գագաթնակետին է հասել 1970-ականներին, եւ նա 1981-ին իր ընտանիքի հետ տեղափոխվել է Լոնդոն, որտեղ հնարավորություն է ունեցել ծանոթանալու աշխարհագրական եւ քարտեզագրական հսկայական նյութերի:

2004-ին հրատարակել է իր առաջին ուսումնասիրությունը անգլերենով «Հայաստանի պատմական քարտեզները» (Historic Maps of Armenia) խորագրով, որն անմիջապես բեսթսելլեր է դարձել իր ժանրում: Հաջորդ տարի հատորի առավել ընդարձակ տարբերակն է հրատարակվել Հայաստանում «Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ» խորագրով:

Հաջորդ գիրքը՝ «Հարավային Կովկասի երկրները միջնադարյան քարտեզներում: Հայաստան, Վրաստան եւ Ադրբեջան», հրատարակվել է 2007-ին Լոնդոնի Կոմիտաս ինստիտուտի կողմից: Նրա հաջորդ գրքերը պատմության նենգափոխության մասին են: Առաջին անգամ նրա գրքերում տեղ են գտել հնագույն ժամանակներից մինչեւ այսօր գոյություն ունեցող Հայաստանի շրջանին վերաբերող կարեւորագույն քարտեզներ: Դրանք ապացուցում են, որ «հայերը Հայկական լեռնաշխարհի, որը գտնվում է Անատոլիայի, Պարսկաստանի եւ Կովկասի հարավային շրջանների միջեւ, բնիկներ են եւ մաս են կազմում հնդեվրոպական մշակութային աշխարհի»:

Գալչյանի գրքերի հիման վրա նկարահանվել է «Ապացուցված աքսիոմ» վերնագրով 35-րոպեանոց վավերագրական ֆիլմ՝ հեղինակությամբ Մարիաննա Աբրահամյանի եւ Անժելա Ֆրանգյանի: Իր ծառայությունների համար Գալչյանը արժանացել է մի շարք պարգեւների, այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի աստիճանի: Հ. Ծ.

# «Ո՞վ է հայը»՝ բանավեճ Լոնդոնում

Թեքեյան մշակութային միության Լոնդոնի մասնաճյուղի կազմակերպությամբ փետրվարի 22-ին Քենսինգտոն գրադարանի դասախոսությունների դահլիճում կայացել է «Ո՞վ է հայը» խորագրով բանավեճ, որը մեծ հետաքրքրություն է առաջացրել: Ներկաների թվում են եղել նաեւ Ուելսից ժամանած հայեր:

Իր բացման խոսքում ԹՄՄ-ի ատենապետ դոկտ. Հրաչ Գույումճյանը անդրադարձել է, իր կարծիքով, հայոց պատմության մեջ «հայկականության» երկու կարեւորագույն դրվագների, մեկը՝ Տիգրան Մեծի խոսքերը, ուղղված հռոմեացի լեգեոնականներին, երկրորդը՝ Սասունցի Դավթի խոսքերը ուղղված Մսրա Մելիքին: Այնուհետեւ նա ներկայացրել է բանավիճողներին՝ պրոֆ. Բերտ Վոյին (Քեմբրիջի Քինգզ քոլեջից), Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանին (Միացյալ Թագավորության եւ Իռլանդիայի թեմի առաջնորդ), Մանուել Հասասյանին (Պաղեստինյան իշխանությունների դեսպան) եւ Հովհան Սիմոնյանին (Հարավային Կալիֆոռնիա համալսարանից):

Պրոֆ. Վոն ներկայացրել է մարդու էթնիկական ծագումը բնորոշող կոնցեպտուալ եւ էմպիրիկական տեսակետները: Հոգեւոր հայրը հայկականության անբաժան մասն է համարել եկեղեցին եւ քրիստոնեական հավատը: Պրոֆ. Հասասյանը խոսել է սփյուռքահայ համայնքներում հայերի դրական դերակատարման մասին, իսկ պրն Սիմոնյանը անդրադարձել է «հայու» ընկալմանը օսմանյան ժամանակներից մինչեւ մեր օրերը:

Բանավեճը բարձր մակարդակով վարել է Լանկաստեր համալսարանից պրոֆ. Սոսի Գասպարյանը:

Ավելի քան երկու ժամ տեւած բանավեճն ավարտվել է հարց ու պատասխանի բաժնով:

Հ. Ծ.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:

Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 14.3.2013, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: